



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

739-11  
4 69

ՀՅՈՒՅ ԼՈՒՐՔԱՎԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՅՈՎՅ. ԹՈՒՄԱՆՑԱՆԻ  
ԱՆՈՒՃԸ

(ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՑԵՎ, ԳԵՂԱՐԳԵՇՏԱԿԱՆ ՎԵՐԱՌԵԺՈՒՄ)

Օրբագուրյուն ՀՅՈՒՅ Պետական Համալսարամի  
«Գիտական Ցեղեկագրի» № 6-ից

ՑԵՐԵՎԱՆ - 1981

891.99.092  
15-28

69.628

391.99.092 Բանական  
Հ-28Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

**Ա Ն Ա Խ Ը Ը \***

(Բանասիրական յելդեղարվեստական վերլուծում)

**Թ Ա Ռ Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

«Անուշ»ի ներկա ուսումնասիրությունը, վորը մասն և կազմում «Հ. Թումանյանի ստեղծագործության գեղարվեստական արժեքը» գեռ անտիկ աշխատության, թեպետև այժմ հրատարակվում է առանձին—աղեցությունների անակնկալ հայտնությամբ ստացած ընդարձակ ծավալի և անկախ գիրքի պատճուռ—բայց գեղարվեստական այնպիսի խնդիրներ, վորոնք աղեցությունների հետ առնչություն չունեն՝ վերապահված են այդ հիմնական աշխատության:

«Ֆառուս»ից մեջբերումներն առնված են Գ. Բարխուդարյանցի թարգմանությունից (Թիֆլիս 1902), ընթերցողին դյուրություն տալու դիտումով միայն, վորովհետև յեթի հավանական իսկ համարենք, վոր 1903 թվին «Անուշ»-ը լույս ընծայող բանաստեղծը վերջին պահուն ակնարկ է նետել այդ թարգմանության վրա, համենայն դեպք, ինչպես որինակները պիտի փաստեն, նրան մշտակես առաջնորդել են ուսուական թարգմանությունները, դիրավորաբար Холодковский (С. Петербург, 1893), ապա՝ Գոլovanov (Москва, 1898), Ֆետ (Москва, 1882) և Ստյովիցով (С. Петербург, 1866).

**I**

1892 թվին Մոսկվայում առաջին անգամ լույս տեսած «Անուշ»ը վերջնական ձև է ստանում 1922 թվին, Կ. Պոլսո հրատարակությում:

Գոյացության այսպիսի յերկար շրջանը «Անուշ»ի նախնական ձևին ավել է միայն արտահայտությունների ճշտում ու խոսցում, սունց, սատկայն, փոփոխության յենթարկելու նրա գործողության ընթացքը:—Հովհան Սարոն և դառնարած Մոսին հարսանիքում կով են բոնում, Սարոն խախտում է աղաքը, Մոսին մերժում է իր քույրը նամարդ ընկերին, Սարոն փախցնում է Անուշին. Մոսին հետապնդում է նրանց և սպանում է Սարոյին:

Այս հիմնական կառուցվածքի վրա հաջորդ հրատարակություններում ավելացել են. —առաջին նախերգանքը (Համբարձման գիշերը), յերկրորդ նախերգանքը (I, II, III հատվածներ), Սարոյի յերգը (IV հ.), Անուշի և մոր

\* ) Հեղմնակի մէկ շաբք ժաքերի հետ խմբագրությունը համաձայն չէ: Տպագրվում է վորովհետ նոր տվյալների հիման վրա քննադատության ուրույն վորք:

խոսակցությունը (V հ.), ջրբեր աղջիկների յերգը (VI հ.), Անուշի մոր կառակածները (VII հ.), Անուշի և Սարոյի ճորի տեսակցությունը (VIII հ.), Անուշի ճորից զուրս զալը (IX հ.), Համբարձման առավոտը (X և XI հ.), Մոսիի հանդիմանություններն Անուշին (XV հ.). Յերազի մեկությունը (XX հ.), Սարոյի բայաթին (XXI հ.), Անուշի խելադարությունը (XXVII հ.) և Եղիլողը (XXIX հ.):

Հայտնի յէ, վոր նախական «Անուշ»ը մեր գրականության մեջ մնաց զբեթի անհնարին, իսկ նրա վերամշակված ձեզ դարձավ հայ գեղջուկի իրականության սուհմական պատկերացման իդեալը, անմրցելիորեն ժողովրդականացած հայ յերկը, զպրոցների դասագիրքը: Այս համբարձին արգյունք եր, անտարակույս, վոչ այնքան նախնական կառուցվածքի կրած վոճական փոփոխության, վորքան յերկին հոգեբանական բովանդակություն տվող հիշյալ տարբերի հայի լման:

Ի՞նչ դարձանք, վոր մեր գրականությունը տարբեր տեսակետներից մերձենար նրա պարզաբանման և գնահատման, առանց, ի հարկե, այդ անխառն հայկական եղանակներով արտահայտված հղացումների ինքնուրույնության մասին վորեն կասկած սնուցանելու, չե՞ վոր նույն արամազդրությունն ու նույն զիտավորությունն ևն ստանորդել և՛ այս տողերի հեղինակին դեսի թուրմանյան ու նրա «Անուշ»ը:

Այսպիսի անվերապահությամբ ձեռնարկված աշխատանքի ընթացքն եր, սակայն, վոր առաջնորդեց մեզ հետեւյալ անակնկալ հայտնություն: —«Անուշ»ի այդ համելյալ տարբերը, նախնական գործողության զուգընթաց, սուհուծել են մի նոր զործողություն, մի անուշյան վողբերզություն, վորի կառուցվածքը, հիմքից սկսած մենչև վերնաշնորհը, առանձին մասերի զրեթե նույն հաջորդականությամբ, կերպաված և Գյոթելի «Ֆառուս»ի մարգարիտյան վողբերգության կառուցվածքի հետևկողությամբ:

Նախնական զործողության ընթացքը մնացել և անփոխիս, յերկու զործողությունների ձուլման համար՝ մարգարիտյան վողբերզությունից զանց են առնված անհարեր նկատված տարբերը միայն, իսկ առանձին մասերին ինքնառապություն տալու զիտումով՝ ողագործվել են ա՛յլ տարբեր Շեքսպիրի «Ոթելո»ից, Լեմոնտովի «Դեկ»ից, Ռուբենշտայնի համանուն ոպերայից և Պ. Պուչյանի «Սոս և Վարդիթեր»ից: Այսպես: —

Մարգարիտյան վողբերգության կառուցվածքի հիմքն և «Ֆառուս»ի «Փողոց» տեսաբանը, ուր Ֆառուսը սեղ և արտահայտում դեպի Մարգարիտը:

Անուշյան վողբերգության կառուցվածքի հիմքն և Սարոյի յերդը (IV հ.), ուր Սարոն սեր և արտահայտում գեպի Անուշը:

«Ֆառուս»ի հաջորդ «Յերկեր» տեսաբանում Մարգարիտին հետաքրքրվում և Ֆառուսի անձով ու նրա խոսքերով և այս առթիվ արտահայտում և մոայ նախազգացումներ. ապա հաջորդում են նրա յերգը թուրայի թաղակարի մասին:

«Անուշ»ի հաջորդ հատվածում (V հ.) Անուշը հետաքրքրվում և Սարոյի մուծով ու նրա յերգով և այս առթիվ արտահայտում և մոայ նախազգացումներ, ապա հաջորդում են ջրեր աղջիկների յերգը (VI հ.), — ներշնչված Լերմանուովի «Դեկ»ի և Ռուբենշտայնի համանուն ոպերայի ջրեր աղջիկների յերգի:



60240.67

«Ֆառուս»ի հաջորդ «Զբոսանք» տեսաբանում ուրվագծվում է Մարգարիտի մոր բնութագիրը:

«Անուշ»ի հաջորդ հատվածում (VII հ.) ուրվագծվում է Անուշի մոր բնութագիրը, վոլտեղ ողագործվում են վորոշ տարբեր «Ֆառուս»ի հաջորդ «Դրացուհու տունը» տեսաբանից:

«Դրացուհու տունը» տեսաբանում Մարթան խրատում է Մարգարիտին խորել մորը:

«Անուշ»ի IX հատվածում Անուշն իրապես խարում է մորը:

«Ֆառուս»ի հաջորդ «Փողոց» տեսաբանն անտեսված է, իսկ հաջորդ «Պարտեզ» տեսաբանում տեղի յեւնենում Մարգարիտի առաջին տեսակցությունը, ուր Մարգարիտը հայտնում է իր տարակուսանքները ֆառուսի սիրո անկեղծության մասին, իսկ ֆառուսը ներկայացնում է իր սիրո ապացույցները:

«Անուշ»ի VIII հատվածում տեղի յեւնենում Անուշի և Սարոյի առաջին տեսակցությունը, ուր Անուշը հայտնում է իր տարակուսանքները Մարգարիտ «Փառական» մասին, սիր Սարոն ներկայացնում է իր սիրո ապացույցները: Այսեղ ողագործվում են ա՛յլ տարբեր «Ֆառուս»ի հաջորդ «Անտառ և քարայր» տեսաբանից:

«Անտառ և քարայր»ին հաջորդող «Գրետիմենի սենյակը» տեսաբանում Մարգարիտի արտահայտում և իր տեհնը դեպի ֆառուսը:

«Անուշ»ի նույն հատվածում (VIII հ.), համբնթաց «Ֆառուս»ի գործողության հաջորդականության, Անուշն արտահայտում է իր տեհնը դեպի Սարոն, ապա հարում և ուսենու յերգը, վոր «Ոթելո»ի Տեղումնայի ուսենու յերգի ձևափոխությունն է:

«Ֆառուս»ի հաջորդ «Մարթայի պարանըր» տեսաբանում Մարգարիտը հայտնում է Մեջիսուսյից զգացած իր սարսափը:

«Անուշ»ի X և XI հատվածներում ներկայացված է Համբարձման վեճականության արարությունը, վորը Պ. Պուչյանի «Սոս և Վարդիթեր»ի վիճականության նկարագրության վոճակորյալ արտահայտությունն է, սակայն, համբնթաց «Ֆառուս»ի գործողության հաջորդականության, այս միջավայրի մեջ զիտեղված է Անուշի զգացած սարսափը դարվիշից:

«Ֆառուս»ի հաջորդ «Ջրհորի մոռ» տեսաբանն անահետափ է, իսկ հաջորդ «Յեկեղեցու գամիթը» տեսաբանում արտահայտված և Մարգարիտի հուսական վիճակը:

«Անուշ»ի նույն X հատվածում, ուրեմն զարձալ համբնթաց «Ֆառուս»ի գործողության հաջորդականության, զարմիկի պատճառած սարսափին հաջորդում է Անուշի հուսահատական վիճակը:

«Ֆառուս»ի հաջորդ «Գիշեր» տեսաբանում Մարգարիտի յեղբայրը՝ Վալենտինը մահացու կերպով վիրավորվում է Ֆառուսից, նա իր քրոջն ուղղում է զառն հանգիմանություններ Ֆառուսի հետ ունեցած նրա հարաբերության պատճառով:

Նախնական «Անուշ»ի մեջ Մասին արդեն պարտփած եր Սարոյից, իսկ վերաբանական գրքում «Անուշ»ի XV հատվածում պարտված Մասին զանդիմանություններ և ողպատմ իր քրոջը, Սարոյի հետ ունեցած նրա հարաբերության պատճառով:

«Ֆառուստ»ի հաջորդ «Մայլ յեկեղեցի» տեսարանն անտեսված է, իսկ հաջորդ «Վալորուրկյան գիշեր»ում ֆառուստը հեռացել է Մարդարիտից, գտնվում է Հարց լեռներում, մտաբերում է Մարդարիտին և անձնատուր և լինում թախծող զգացումների:

«Անուշ»ի նախնական գործողության հետ ձուլված ԽՍԼ հատվածում Սարոն հեռացել է Անուշից և գտնվում է լեռների վրա, մտաբերելով Անուշին՝ իր բայրի անձնատուր և լինում թախծող զգացումների:

«Ֆառուստ»ի հաջորդ «Ամպամած որ» և «Գիշեր» տեսարաններն անտեսված են, իսկ հաջորդ՝ վերջին «Բանտ» տեսարանում ներկայացված է Մարդարիտի խելագարությունը:

Նախնական «Անուշ»ի գործողությունից հետո, նոր ավելացած վերջնիներ ԽՍՎԼ հատվածում, ներկայացված է Անուշի խելագարությունը: Այս խելագարության հետ ձուլված են և՝ տարրեր «Դեմ»ի հերոսի հոգեբանությունից: —Թամարան «Անորոշ ձայն»ից խրատներ ե լսում—հետեւին բնության որենքներին և անձնատուր լինել նոր կյանքի: Անուշը խրատներ ե լսում «անցվոր ախալերից», —նույնպես հետեւել աշխարհի որենքներին և անձնատուր լինել նոր կյանքի:

«Անուշ»ի այս գործողությունից դատ, նրա ընդհանուր կառուցվածքի մեջ ևս պահպանված է հետեւղականությունը:

«Ֆառուստ»ի առաջին նախերգանքը մի «Զոն» ե, ուղղված յերկի մոռացված հերոսներին և բանաստեղծի անհետացած բարեկամներին:

«Անուշ»ի յերկրորդ նախերգանքը նույնպես իբր մի ձոն՝ ուղղված է հայրենի լեռներին և անհետացած սիրելիներին:

«Ֆառուստ»ի Ա մասը վերջանում է եպիլոգով, —ներկայացված է յերկինքը, ուր ֆառուստն ու Մարդարիտը, հեռու յերկրային տանջանքներից, միանում էն հալիտենական կյանքով:

«Անուշ»ը նույնպես վերջանում է եպիլոգով, նույնպես ներկայացված է յերկինքը, ուր՝ նույնպես յերկրային տանջանքներից հեռու, «անմուրալ մեռած սիրահարներ»ը միանում են, թեպետե տարին մեկ անդամ—Համբարձման գիշերը:

Հաջորդականության տեսակետով՝ վորոշ բացառություն և կազմում «Անուշ»ի միմիայն առաջին նախերգանքը:

«Ֆառուստ»ի Լ-ին մասում հայտնվում են վորիներ՝ կախարդական յերգերով հերոսին քնայինելու և սրա անհերթի առթիվ՝ «ղեղեցիկ աշխարհ»ի կործանումը վողբալու համար: Վողիները հայտնվում են և՝ Վ մասի նախերգանքում. յերգում են ամբողջ գիշերը, խղճի խայթից տանջվող հերոսին թարմ ուժ՝ ու կենդանություն ներշնչելու համար, իսկ յերբ արեն սկսում ե ծագել՝ պնդետանում են:

Այս վորիներն, ուրեմն, հայտնվում են «Անուշ»ի առաջին նախերգանքում: Փերիները համբարձման ամբողջ գիշերը յերգում են, վողբալով հերոսների վաղամեռ սերը, հենց վոր արեն սկսում ե ծագել՝ անհետանում են:

Այսպես, ուրեմն, նախանկան «Անուշ»ի վրա հետաքայում ավելացած բուլը մասերը, բացի յերազի մեկնությունից, յեկամուտ տարրեր են: Մարդարիտյան վողբերգության կառուցվածքի հետեւղությամբ, նման մոտիվների նույն հաջորդական դասավորմամբ՝ ստեղծվել ե անուշյան վորիները:

ուր սպազություն են դասնազան մոտիվներ, ինչպես «Ֆառուստի I և II մասերից՝ նույնպես և տարրեր հեղինակություններից»:

Այժմ՝ հետեւղով նույն հաջորդականության, սկսած նախերգանքից, համեմատենք այդ նման մոտիվները միմյանց հետ և անսնենք՝ թե ինչ ուղիներով և լնթացել նրանց զարգացումը:

## II

Յերկու վորիներգությունների նման մոտիվների զարգացման կապահովությունն առաջին իսկ առթիվ ակնբախ չեն, վորովհետեւ ոտեղծած յուրաքաչուր տեսարանը մի տարրերային համանվագ է, ուր լսում են բազմապիսի ձայներ՝ յերկնամբարձ և անդնդային յելեցներով: Թումանյանն ունկնդրում ե այդ համանվագը հովվական սրինդը ձեռին և մինչ փորձում ե վերաբարեկ նրա ամբաղջական մոտիվները՝ ստանում ե վորոշ հնչյունները միայն, այն չափով՝ ինչ չափով թույլ ե տալիս իր գործիքի տարողությունը: Բայց նա մի չտեսնված վիրտուոզ սրնդահար է, տարրեր հնչյուններն այնպիսի հարտարությամբ է ներգաշնակում, և իր գործիքին հարազատ այնպիսի ինքնատիպ յերանդներով և վերաբարությունը, վոր միայն չափազանց լարված լսողությունը ովհափի կարողանա ճանաչել արդ հնչյունների ծագումը և աղատվել նրանց ներշնչած ինքնատպության պատրանքից:

«Ֆառուստ»ն, ուրեմն, սկսվում է «Զոն»ավ, ուր բանաստեղծը խտացնում է իր ելեփիական տրամադրությունը մոռացության մատնված հերոսների հանդիպել, վորոնց այժմ ձեռք և կարկառում կենդանություն տալու. նա վորում է և՝ իր բարեկամների կորուստը, վորոնք այլևս չպիտի լսեն նախկին յերգերի շարունակությունը:

«Անուշ»ի I, II, III հատվածները թեպետ պահել են նախնական նախերգանքից շատ աղոտ տարրեր, բայց վոխարիվել են նույնպես մի ձոնի, ուղղված հայրենի լեռներին, անցած որեցին և սիրելի դեմքերին: Այս յերեք հատվածները հավասար չափով զդացել են «Ֆառուստ»ի «Զոն»ի ելեփիական շունչը, իսկ II հատվածն ամբողջությամբ հզարված է նրա 1—20 տողերի անմիջական աղդեցությամբ: «Ֆառուստ»ի առաջին և 9—20 տողերի բոլանդակությունը, արագահայտությունների վորոշ հապավումներով, ամփոփված և «Անուշ»ի 11 հատվածի 1—10 տողերում. —

«Ֆառուստ».—կրկին հայտնվում եք, պատկերներ աղոտ . . .

Բերում եք ձեզ հետ ուրախ որեցի

Պատկերները և սիրելի ստվերներ . . .

Վիշտո նորոգվում, սրտիս լարերի

Հնչյունը . . .

Անվանում և սիրելիներին,

Վորոնք հեռացան, թողին ընկերին . . .

Ավազ, ցրված են բարեկամները,

Քնարո չե հնչում նոցա ականջին:

«Անուշ».—Ե՛յ, հին ծանոթներ, Ե՛յ, կամաչ սարեր,

Ահա ձեզ տես միտս ընկան,

Առաջո յեկան յերջանիկ որեց,

Սիրելի դեմքեր, վոր հիմի չկան:

Անցել են վոնց գոր ծաղկունքը պեսոպես,  
Վոր անցած զարնան կային ձեր լանջում,  
Անցել՝ ձեր գլխի հերկան ձյունի պես,  
Բայց յեկել եմ յես, նրանց եմ կանչում—  
Վողջուն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,  
Վորբացած հոգիս վողջունում ե ձեզ:

Ինչպես Խալագկովսկու\*» թարգմանությունից ավելի պարզ նկատվում է՝ «Ֆառուս»ի առաջին յերեք տողերի բովանդակությունը նույնությունը փոխանցված և «Անուշ»ի առաջին չորս տողերին։ Այնտեղ պատկերներն արթնացնում են ուրախ որերի և սիրելի ատվերների հիշատակը, այստեղ կանաչ սորերի տեսքն արթնացնում է յերջանիկ որերի և սիրելի գեմքերի հիշատակը։ Այս հիշատակները լցնում են յերկու գրվածքների հաջորդ տողերը նույն թախիծով։ Այնտեղ հեռացել են բանաստեղծի ընկերները, և ցրվել են բանց խումբը, այստեղ վորբացել ե բանաստեղծը, վորովհետեւ սիրելի գեմքերն անցել են ինչպես զարնան ծաղիները և ինչպես հերլան ձյունը։ Այնտեղ՝ Խալագկովսկու թարգմանությամբ բանաստեղծը դիմում է իր նախկին ընկերներին սմամիջական կերպով, այստեղ բանաստեղծը դիմում է իր անդրանիկ հուշերին (սիրելի գեմքերին) նույնպես անմիջական կերպով, բայց այդ դիմումին հաջորդադողերով կապվում է «Ֆառուս»ի 5—8 տողերի հետ։

«Ֆառուս»։ Ամբովում եք իմ շուրջ ողում մշուշոտ,  
Շատ լավ, հակառակ չեմ յես ձեր կամքին,  
Կուրծքս զգում ե ուժ պատանեկանկան  
Դիպչելով ինձ ձեր շոնչը դյութական։  
«Անուշ»։ (Վորբացած հոգիս) թոշուն կարուսով  
Փնտրում ձոր ու լեռ,  
Դյութական ձայնով կանչում ե հանդես։  
Դուրս յեկեք կրկին շիրմից, խավարից,  
Դուրս յեկեք տեսնեմ, շշափեմ, լսեմ։  
Կյանքով չնչեցեք, աղբեցեք նորից,  
Լցրեք սուետի հաճույքը վսեմ...

Այնտեղ նախկին պատկերները ծանությամբ բարերով դուրս են դալիս թանձը մշուշոց, իսկ այստեղ բանաստեղծը կմնչում է անհետացած սիրելիներին, վոր

### \*<sup>\*)</sup> Холодковский.

Опять вы, образы туманные. Со мною.....  
Вы снова принесли с собой воспоминанья  
Веселых дней моих и милых теней рой;  
Вновь оживает скорбь и прошлое страданье;  
Я вижу...  
И образы друзей беспечною толпою  
Отдавшихся судьбе, расставшихся со мною.  
О, Вы, которым пел я прежде, вдохновеный.  
Друзья—теперь моя Вам песня не слышна!  
Наш дружеский кружок рассеян по вселенной.  
А песня первая... забыта уж сна.

զուրս զան շիրմից, խավարից՝ այնտեղ՝ մշուշոց զուրս յեկած պատկերներն իրենց գյութական չնչով ալեկուծում են բանաստեղծի կուծքը\*), իսկ այստեղ մշուշոց, խավարից զուրս պիտի զան սիրելիները, վոր լցնեն պուտի վսեմ հաճույքը (ալեկուծեն կուրծքը)։

«Փողոց» տեսարանով մարգարիտյան վորբերգության կառուցվածքի հիմքըն և գրփում։ Ֆառուսը փողոցում հանգիստ և Մարգարիտին և նրան տունչարկում ե իր ուղեկցությունը, բայց մերժվում է, առանձին մալուգ՝ տակ է։

Աստված իմ, ի՞նչ գեղեցիկ ե այս յերեխան,  
Յևո կյանքիս մեջ գեղ ահսել վոչինչ նման։  
Ի՞նչպես համեստ ե նա, ինչպես առաքինի,  
Յեկ միենույն ժամանակ սուր լեզու ունի։  
Երթունքների վարդադոյնը, փայլն այսուրի  
Ինչքան ազգեմ յստ մոռանալ ինձ չեմ ների։  
Յերբ աչքերը խոնահեցրեց պարկեցաբար,  
Նա իմ սրբին ակրապեմեց իսկույն իսպառ։  
Նա ինձ այսպես կարձ ու կտրուկ պատասխանեց,  
Վոր իմ խելքը հափշտակեց, հոգիս հանեց։

Իսկույն հայտնիում և Մեֆիստոն, Ֆառուսը նրան սպասնում է։—  
Պարսն Մազփիստոս ...

Վոր թե այս գիշեր, այս լավ իմացիր,  
Զի մտնի զիրկս այս սիրունիկը,  
Ապա կը լուծեմ յես մեր գաշինքը։

Մեֆիստոն խորհուրդ և առիս չաճապարել։

Այլի լավ և նորան քաշքան։  
Այս ու այն կողմը ու սեթեեթել,  
Նախապատրաստել, քաշել ա՞խ ու վա՞խ։

Ֆառուսն առարկում է՝ թե համբերություն չունի ...

Առանց զորան ել ունիմ ախորժակ։

Իսկ Մեֆիստոն զգուշացնում է։—

Այս զործում ուժը չի ձեզ ուղարկետ։

Ֆառուսի և Մարգարիտի «փողոցի» այս հանգիստում հողերանորեն նախապատրաստված և նախօրդ տեսարանում՝ «Վուկի խոհանոցում»։—Ֆառուսի մեջ զգայական տրամադրություն սաեղծելու, հաջորդ տեսարանում Մարգարիտով անմիջապես հրապուրվելու համար՝ Մեֆիստոն կափարզական հայելու մեջ ներկայացնում է մի գեղեցիկ ինոչ մերկ մարմին։ Այս մարմինն աղջած Ֆառուսի արտահայտությունները «փողոց» տեսարանի հոգեբանական կառուցվածքի հետ մի ամբողջություն են կազմում, հար և նման Մարգարիտի նկատմամբ նրա արտասանած մենախոսության վոզուն։ Մեղ համար ուշագրագում են այդ պատկերի աղդեցությունն արտահայտող հետեւալ խոսքերը։

Կուրծքս սկսում է այրվել։  
Արի հեռանանք շուտով։

<sup>\*)</sup> Холодковский.—Как в юности, опять мне что-то грудь болиует,  
Душа волшебное дыханье ваше чует.

Սարոյի յերգով անուշյան վաղբերգության կառուցվածքի հիմքն է դըր-  
զում : Սարոն սարի լանջից տեսնում է Անուշին և սկսում է յերգել .—  
Աղջի, անսաստված, նստիր վրանում,  
ի՞նչ ես դուրս գալի, իսկ քամաղ անում,  
Աշուղ ես շինել, չեմ հանգստանում .  
Խաղեր կապելով, չոլեր չափելով,  
Վոչխարս անուեր,  
Ընկել եմ հանգել:  
Աման, Երեցիր սիրսո քո սիրով,  
Վոտս կապեցիր թել-թել մաղերով,  
Ել չեմ զիմանալ, կը փափանեմ զոռով,  
Այս սարի աղջիկ,  
Այս սիրուն աղջիկ,  
Այս դու կարմրաթուշ  
Թուխամաղ Անուշ:  
Քու հերն ու մերը թե վոր ինձ չտան,  
Արին կը թափեմ յես դետի նման,  
Սարերը կընկնեմ, կորչեմ անդյունան,  
Այս սե աչքերով,  
Այս ծով աչքերով,  
Ռւնքերէ կամար,  
Աղջիկ, քեզ համար :

Յերկու սիրահարների սիրո արտահայտություններով ե սկսվում , ուրեմն ,  
յուրաքանչյուր վաղբերգության զործողությունը : Սակայն Սարոյի արտահայ-  
տություններն արտաքին այնպիսի ինքնուրույն յերեսոյթ ունեն , վոր , առա-  
ջին առթիվ , գժվար և վորեե ներքին կազ յենթաղել նրանց և ծառուսի ու  
Մեֆիստոյի արտահայտությունների միջին : Բայց յերը մի բովե մտաքերենք  
մեր բանաստեղծի կախարդական սրբինչը , նրա տարողությունն ու ինքնատիպ  
գուհավոր հնչյունները և Գյոթեյի տարերային համանվազն ու նրա յելենց-  
ների տարածությունը և ըստ այնմ համեմատենք յերկու մտակեր միմյանց հետ ,  
այն ժամանակ գյուրությամբ կազամվենք այդ արտաքին յերեսոյթի ներշնչ-  
չած ներքին ինքնուրույնության պատրանքից : Մենք անմիջապես կնկատենք .—  
վոչ միայն ծառուսի և Մեֆիստոյի ակնարկված արտահայտություննե-  
րում , այլև առհասարակ ամբողջ «Փողոց» տեսարանում և Սարոյի յերգում  
յերեք դիմավոր մոտիվներ են հեղհեղվում .—զեղեցկություն , զեղեցկության  
աղդեցություն և սիրականին տիրանալու ցանկություն : Մենք սկսում ենք տա-  
րակուսիլ .—մի՞թե հնարավոր ե , վոր յերկու տարբեր գրվածքների տարբեր մտ-  
ակեր պատահականորեն կազմեն կառուցվածքի համապատասխան մասեր և նույն  
պատահականությամբ զարգացնեն նման մոտիվներ : Բայց ահա վերահասու  
յենք լինում միաժամանակ , վոր այսուղ կատարվածը մոտիվների վերացական  
յուրացում չե միայն , այլ Սարոյի յուրաքանչյուր մոտիվի արտահայտու-  
թյունն ես ներքուստ կոնկրետ կերպավ ներգանակված է Ֆառուսի կամ Մե-  
ֆիստոյի վերեսում հիշված համապատասխան մոտիվի արտահայտության  
հետ : Ֆառուսն ասում ե , վոր Մարդարիսոր զեղեցիկ ե հիմնում է նրա կար-

միր շրթունքներով , այտերով ու խոնարհած աչքերով :\*) Սարոն ասում ե , վոր  
Անուշը նույնպես զեղեցիկ ե և հիմնում ենրա կարմիր թշերով , ծով աչքերով ,  
կամար ունքերով ու թուխ մաղերով : Նա իր հայ հոգին՝ շրթունքների հրա-  
պույրի մասին զաղափար չունի , հետեւապես զարմանալի չե , վոր շրթունք-  
ներին փոխարինում են կամար ունքերն ու թուխ մաղերը , համաձայն իր ճա-  
շկի :

Մարդարիսն իր հրապույրներով և պատասխանով ֆառուսի խելքը հա-  
վաքառիկեց , հոգին հանեց , իսկ աչքերով նրա սիրտը կրակ լցրեց :\*\*) Մերկ  
ուստիկերի հրապույրները նրան խելքեղ են անում —

Կուրծքս սկսում է այրվել ,

Արի , հեռանանք չուտով :

Անուշի հրապույրները ներգործում են Սարոյի վրա . անսատված աղջիկը  
նրան խելքամաղ ե անում և կամ :

Աման երեցիր սիրսո քո սիրով ,

Վոտս կապեցիր թել-թել մաղերով :

Յերկու սիրահարների այս արտահայտությունների առաջին տողերը գրե-  
թե բառացիորեն նույն են . իսկ յերկորդ տողերում՝ մինչ ֆառուսն իրեն  
ուստիկերին ձգող զղթայից ուղում է զերծ զալ . Սարոն նրանից  
ամրաբերվելու համար կաշկանդվում է այնտեղ :

Մարդարիսն տիրանալու համար՝ ֆառուսն սպառնում է Մեֆիստոյին .—

Վոր թի այս դիմեր , այս լավ իմացիր ,

Զի մոնի գիրկու այն սիրունիկը ,

Անա կը լուծեմ ես մեր գաշինքը :

Անուշին տիրանալու համար՝ Սարոն սպառնում է նրա ծնողներին .—

Յո հերն ու մերը թե վոր ինձ չտան ,

Արին կը թափեմ յես դետի նման :

Ֆառուսը հայտնիւմ է՝ թե համբերելու կարողություն չունի այլևս . Մե-  
ֆիստոն զգուշացնում է՝ թե ուժով վոչինչ չի կարիլ անել :\*\*\*) Սարոն հայ-  
տարարում է —

Ել չեմ զիմանա , կիմաիցնեմ զոռով :

Մեֆիստոն խորհուրդ է տալիս քարշ զալ նրա յետից , այս ու այն կողմը  
քաշքել , ախու վախ քաշել :\*\*\*\*) Սարոն ճիշտ այս վիճակի մեջ է զտնվում .—

Աշուղ ես չինել , չեմ հանգստանում ,

Աղջիր կապելով ,

Չուկր չսփելով ,

) **Холодковский.** О, розы губ ся и щек....

**Голованов.**—Ей богу, чудное дитя. А розы губок, щечек

Милых. А взгляд опущенный ее....

\*\*) **Холодковский.**—Она потупившись промгла

И пламя в сердце мне зажгла

\*\*\*) **Холодков.** Тут силой нам не взять.

\*\*\*\*) **Холодков.** Не лучше ли поволочиться,

Завлечь, заставить потонуться

Водить ее и так, и сяк.

Վոշխալս անտեր,  
Ընկել եմ հանդեր:

Այսպիսով պարզիւմ է, ուրեմն, վոր յերկու հասկածները ներգաշնակված են միմյանց հետ վոչ միայն նույն կառուցվածքով, այլև նույն մասիներով և նրանց նույն բովանդակությամբ արտահայտություններով։

«Ֆառաւս»ի հաջորդ «Յերեկո» տեսարանում Մեֆիսոսի առաջնորդում և ֆառաւսին Մարդարիտի սենյակը, այսուղ թողնելու խորհրդավոր զարդերը։ Նախքան ֆառաւսը և ապա նրանից անմիջապես հետո սենյակ և մտնում Մարդարիտը։ Եռաջին ասթիվ նա հետաքրքրվում է ֆառաւսի խոսքերով, իսկ հետո արտահայտում է այդ խոսքերի ասթիվ տիտուր նախազգացումներ։

Այս տեսարանն հակադրված է «Անուշ»ի V հատվածը։ Այստեղ զարդերի խնդիրը բոլորովին անուելած է, նրան վոխարինել են մոր խրամներն աղջկան, վորի մասին հաջորդիվ պիտի անդրազաննաք։ Բայց այդ խրամներն սկսվում են Անուշի հետաքրքրությունը դեպի Մարոյի յերգը և վերջանում են արդ յերգի ասթիվ տիտուր նախազգացումներով։

Մարդարիտ։ Ա՛յս, յերանի խմանալ կարողանամ։

Պարոնն ո՞վ եր, վոր պատահեց ինձ այս անդամ։

Յել նրա անձի մասին յեզրակացնում է։

Տեսքով կորիճ եր բավական,

Անշուշտ ենա ազնվական,

Յեկ այդ շատ պարզ յերկում են նրա զեմքից,

Թե չեն նա չեր համարձակի կանգնեցնել ինձ։

Անուշ։ Են ո՞վ եր, նանի, վոր կանչում եր մեզ,

Դու չե՞ս խմանում, ականջ արա, տե՛ս...

Իսկ յերգովի անձի մասին Մարդարիտի յեզրակացությունը կրկնում է Անուշի մայրը։

Հանգիստ կաց, Անուշ, դու հասած աղջիկ,

Ի՞նչ ունիս ջահել չորանների մոտ,

Նստիր վրանում, քու-դործին մտիկ,

Պարկեցտ կաց, աղջի՛, ամոթ և ամոթ։

Տեսորանի ուշիցում Մարդարիտն տում է։

Չղիտեմ ինչի՞ յեմ յես անհանգիստ,

Մայրս յերանի՛ թե շուտով տուն զար.

Բոլոր մարմելովս դոլում եմ յես խիստ։

Ի՞նչ վախկոս աղջիկ եմ յես ու հիմար։

Իսկ հասկածի վերջում Անուշն ասում է։

Ա՛յս, սիրոս, նանի՛, չը դիտեմ ընչի՞,

Մին լաց ն լինում, սեակնան, տիտոր,

Մին թե ե ասնում, ուզում և թոչի,

Չը դիտեմ թե ո՞ւր, չըդիտեմ թե ո՞ւր...

Նանի ջան, նանի, կուժը թոզ ասնեմ,

Աղրաւը դնամ աղջիկների հետ։

Մարդարիտն իր այդ տիտուր նախազգացումներին արտահայտություն և ուսիր թուլայի թագավորի յերգով, վորի բավանդակությունն ողմադործված

չե, վորին սակայն հակագրելու նպատակով, նույն հաջորդականությամբ դեսկված է ջրբեր աղջիկների յերգը։

Այս յերգի հզացումը համեմայն գեղս ինքնուրույն չե, ներշնչված է Լիրմոնակի «Դեկ» պոեմայից և Ռուբենշտայնի համանուն ոպերայից։

Ջրիկը աղջիկների մասին «Դեկ»-ի մեջ յերկու տեղ և հիշտակվում։

Զրգած յուր ուսին սական լսովիստակ

Ի շանհագուստը թամարան մատաղ

Զուր վեր տոնելու իշնում և համախաչը<sup>\*)</sup>)

Մի այլ տեղում։

Յերը յերկար կուժը գրբած իր ուսին

Ժայռափուտ լիումի լանջից ուղղաձիւ

Իշնում և ջրի մատղաշ վրացուհին...<sup>\*\*)</sup>)

Այս տաղերի վրա Ռուբենշտայնի յիշետառը մեջ ձեւկերպված են Հետելյալ տողերը։

Խօdim մա կ Արգե սետլոյ

Կаждый вечер за водой,

И кувшины наполняем

Мы струеной водой.

Անա այս տարբերից և կառուցված «Անուշ»-ի ջրբեր աղջիկների յերգի սուանը։

Կը ու երն ուսած թրբվուալով

Զուրին են իշնում աղջիկներ,

Խընգում իրար ուսի տալով,

Յերգը զընգում սարն ի վեր։

Առաջին յերկու տողերը, առանց կարեվոր մշակման, սոնված են պումաս հատկապես հայերնեն թարդմանությունց, իսկ վերջին յերկու տողերը ներկայացնում են ոպերայի ջրբեր աղջիկների վիճակը։

Ոպերայի յերգի հաջորդ տնիերեն են ալիքներ, վոսկյա ձկնիկ և մեր, իսկ Անուշի յերգի տարբերը՝ սրազ ջրեր, յար և սեր<sup>\*\*\*)</sup>)։ Հակառակ

\*) Կնյանա Տամարա молодая

Կ Արգве ходит за водой.

\*\*) Когда грузинка молодая

С кувшином длинным за водой

С горы спускается крутой.

\*\*\*) День и ночь бежит Арагва

Неустально по камням.

Золотая пленет рыбка

Но сапфировым волнам,

Золотая, не простая,

Да не всем она видна,

Лишь когда кого полюбит,

С ним и речь ведет она.

Увлечет к себе в хоромы,

Ամպի տակից ջուր և զալի

Դոչ և տալիս, փրփլում

Են ո՞ւմ յարն և նստած լալի

Հոնդուր հոնդուր են սուրում։

Եց պազ ջրեր, զուրալ ջրեր,

Վոր զալիս Եց սուրերից

Գալիս ացնում հանդ ու չուրեր,

Յարս ել խմե՞ց եղ ջրեր։

Յարար խմե՞ց, յարար հովցա՞լ

Վառված սիրտը են յարի

Յարար հովցա՞լ, յարար անցա՞լ

ապրերի այս նմանության և վասանավորների չափի նույնության, համեմայն դեպք, հայ ժողովրդական յերգի մասին բոլոր ոգտագործումով՝ այդ տարերի տարբեր հարաբերությամբ սահզծվել և այնպիսի մի կառուցվածք՝ վորի նմանությունը ոպերայի յերգի հետ ստացել և միանդամայն արտաքին բնույթ:

## III

«Յերեկո» տեսարանին հաջորդում ե «Զրոսանք» տեսարանը, ուր, ի միջի այլոց, բնութագրվում է Մարգարիտի մայրը:

Մարգարիտի մայրը «Ֆառւստ»-ի մեջ բնակ հրապարակ չվ դալիս. նրա մասին տարբեր տեսարաններում կան միայն տեղեկություններ: Այսպես.— «Մարթայի տունը» տեսարանում Մարգարիտը մորից ծածուկ զնում և Մարթայի մոտ և պատմում ենոր դանձված զարդերի մասին: Մարթան խրառում ե. «Այդ մասին վաշինչ չասես քո մորը, թե չե կանչե խստովանահորը»: Այդ պահուն, յերբ Ե՛քիստոն գուուը բախում ե՝ Մարգարիտը շփոթվում ե. «Վոր մայբս լինի՝ հիմի ի՞նչ անեմ»: «Պարտեղ» տեսարանում Մարգարիտը պատմում է ֆառւստին «Մայրս սևնի շատ խիստ բնություն, սաստիկ սիրում և կար դապահություն»: յերբ Ֆառւստն առաջարկում է իր ուղեկցությունը՝ նա պատասխանում է. «Վո՛չ, վո՛չ, մնառ բարով, մայրս կը տեսնի»: Իսկ «Մարթայի պարտեղ»-ում, յերբ Ֆառւստն առաջարկում է զիշերը միասին լինել, պատասխանում է. «Բայց մայրս հանկարծ թե զաքթի քընից, տեսնե միասին, այստեղ քեզ ու ինձ, կը մենամետ տեղն ու տեղը անդասածու»: Այս ակնարկությունները վորքան բնորոշում են Մարգարիտի բնութագրը՝ նույնքան ել լուսարանում են մոր անձնությունը, վորը հայրանիում է իր աղջկա քայլերին հսկող, աչալուրջ, խիստ կնոջ գծերով:

Չմոռանանք՝ վոր Անուշի մայրը միայն վերամշակված «Անուշ»-ով և հրապարակ դալիս: V հատվածում նա իր աղջկան խրառուն:

«Հերիք ե Անուշ, ներս արի դաղեն,  
Քանի դուրս թռչես, նայես գես ու դեն,  
Տեսնողն ել կասի, ի՞նչ աղջիկ ե սա,  
Հազար մարդի մոտ կերթա կը խոսսա»:

Ճիշտ ե՝ վոր նա այս հատվածում յերեսով անձի մասին մեզ լուսարանեց, բայց պետք ե ուշազրություն դարձնել՝ վոր այդ լուսարանով՝ Մարգարիտի մոր նման՝ աղջկա քայլերին հսկող, աչալուրջ, խիստ կնոջ գծերով և հայտնիում:

Հիշյալ «Զրոսանք» տեսարանում ակելի բնորոշում է Մարգարիտի մայրը:

Из цветного хрусталия  
Кто войдет туда, вернется  
Не захочет никогда.

Անքուն ցավը ջիգյարի:  
Աղջի քու յարն յեկավ անցավ,  
Վասկած, տարգած քո սիրով,  
Աղջի, քու յարն յեկավ անցավ,  
Ջուգացավ պազ ջրով...  
Ամպի տակից և այլն:

Աղջկա համար պատրաստված զարդերը նա հանձնում է քահանային: Ե՛քիստան այս մասին զայրացած պատմում է Յառուսին:

Մայրը ուսնում է սիրուն արկդիկը,

Յեկ սարսափում է բարեպաշտ կնիկը.

Շատ նուրբ և նրա հոտուելիքը:

Չեսից չի թողնում աղոթագիրքը,

Միշտ հոտուամ է նա իր քթով սուր,

Թէ վոր բանն է սուրը, վորը անմաքուր:

Զարդը տեսնելով՝ չուտ հանկացավ նա,

Թէ այդ բանի մեջ որհնություն չկա:

Անարդար գույքը, վորդյան թանգարին,

Ասաց, մաշում է մարմինն ու հոդին...

Այստեղ, ուրեմն, ավելի ընդլայնված է մոր բնութագիրը. նա վոչ միայն իր աղջկա քայլերին հետեւող խիստ կինն է, այլեվ կասկածամիտ է և յենթակամ մշուշապատ կուհումների:

Հաջորդական կարգով՝ «Զրոսանք» տեսարանի համապատասխան վիճակու «Անուշ»-ի VII հատվածը: Այստեղ ել բնութագրվում է Անուշի մայրը:

Առ պատավ նանի որստի մեջ հանկարծ

Չեն տվալ թաքուն մի իսկավը կասկած.

Ամպերն եկել են, սարերը պատել,

Չորերը լցվել, իրար վաթաթվել,

Հազար չար ու չառ, հազար հարամի,

Հազար ջահիլներ վիստում են հիմի...

Ո՞ւր կորար, Անուշ, ա'յ մազդ կորած...

Աղջի, սեվասիրա, քո աչը կարի,

Աղջիկը մենակ ձո՞րը կը մտնի...

Աղջի, հայ Անուշ, ա'յ աղջի, Անուշ...

Աւ.... նայում ներքեվ սիրու սեվակնած\*):

Այստեղ ել ընդլայնվում է Անուշի մոր բնութագիրը. նա ևս իր աղջկա քայլերին հետեւող՝ խիստ կինը չե միայն, այլ նույնպես կասկածամիտ է նույնպես յենթակամ մշուշապատ կուհումների: Միայն բնութագրերի նույն գծերի հայտնությունը չե մեր ուշադրությունը դրամուղը. նույնքան ուշադրամի և արտահայտությունների վորոշ ձեմքերի նմանությունը: Մի անգում մայրը կոչվում է «Պառակ» կամ «Պառակ մայր»\*\*): մյուսում՝ «Պառակ նան»: Մայրերը դիմում են իրենց աղջիներին, բայց վո՛չ հեռավոր ձեկերով՝ «Վորդյակ թանգարին»: «Աղջի Անուշ»: Այս աղջի: Իսկ վոր ամենագլխավորն ե՝ «Անուշ»-ի առաջին յերկու տողերը հարազատ արտահայտությունն են ֆե-

\*) Խօլոդկովսկий.

Мамаше Гретхен показала.

А той сейчас же жутко стало...

Повсюду шохает она

Свята ли штука иль грешна..

«Дитя мое» старуха шепчет ей

Неправое именье--лютый змей!...

\*\*) Струговников.—Вещи старуха мать увидала...



ибо *թարգմանության համապատասխան տողերի բավանդակության*) . . . ибо  
տեղում մայրը զարդերը տեսնելով. «В МИГ СОМНЕНИЕ ВОЗЫМЕЛЯ», իսկ մյու-  
սում՝ աղջկա բացակայությունը նկատելով՝ «որտի մեջ հանկարծ ձեն աշակ-  
քաքուն մի խավար կառկած»:

Սակայն բնութագրերի և վորոշ արտահայտությունների այս նույնությու-  
նը՝ մի տեղում զարդերի խնդրով, իսկ մյուսում՝ աղջկա ձորը մանելու աս-  
թիվ և հանդիս զալիս: Մի տեղում Մէֆիստոն պատմում և մոր հատկություն-  
ների մասին, իսկ մյուսում՝ մայրն ինքն և այդ հատկությունները հայտնաբե-  
րում: Տարբեր վիճակներ, արդարեկ, վորոնց գաղտնիքը, սակայն, թագնված  
և «Ֆառուտ»-ի հաջորդ «Գրացուհու տունը» և «Պարտեզ» տեսարաններում:

Առաջին տեսարանում Մարգարիտը մորից ծածուկ գալիս և Մարթայի  
տունը և պանխում նորադյուս զարդերով: Այդ պահում, յերբ Մէֆիստոն  
դուռը բախում ե՝ նա բացականչում ե՝ «Հոր մայրս լինի, հիմի ի՞նչ անեմ»\*\*\*):  
Իսկ «Պարտեզ» տեսարանում տեղի յե ունենում մորից ծածուկ Մարգարիտի  
առաջին տեսակցությունը ֆառուտի հետ, վորին հակագրված և VIII հատվա-  
ծում՝ Անուշի առաջին տեսակցությունը Մարտի հետ՝ ձորում: Արդ, քանի  
վոր Անուշն անխուսափելիսը մորից ծածուկ ձորի պիտի իջնի, և Մարգարի-  
տի վերելի արտահայտությունն ել շատ վորոշ ակնարկ և ծածուկ հետացող  
աղջկան վնարող մոր մասին, պարզ ե, վոր Անուշի մայրը, առանց զրադիլու  
արդեն զանց առնված զարդերի խնդրով, սպավում և այդ ակնարկից, վնարում  
և աղջիկը և հայրաբերում և իր բնութագիրը՝ նրա ձորը մանելու առթիվ:  
Վոր, արդարեկ «Գրացուհու տունը» տեսարանի Մարգարիտի այդ արտահայ-  
տությունից ներշնչված Անուշի մայրը վնարում և աղջկան, պարզվում և ե՛  
հետեւ պատճառով —

VII հատվածում մայրը վնարում և աղջկան, IX հատվածում դեռ շարու-  
հակցում և նրա կանչը և հետեւում և աղջկա պատճառախանը: Աւրեմն VIII հատ-  
վածը, Անուշի և Մարտի ձորի տեսակցությունը, ինչ նկատումներով և,  
VII և IX հատվածների միջն զետեղված բնդունենք, պարզ ե, վոր այս յերկու  
հատվածները մի անբաժանելի ամբողջություն են: Իսկ այդ IX հատվածը  
հենց նույն «Գրացուհու տունը» տեսարանի՝ Մարգարիտի և Մարթայի խրատու-  
մում մի այլ մոտիվի արտահայտությունն եւ — Մարթան խրատում  
է —

Յուտ չուտ յեկ ինձ մոտ, ծածուկ զարդարվիր.

....իւլինի մի դեպք, մի տոն որ  
Մարգարանց կերեվանք զարդով փառափոր,  
Վուկով, մարգարտով, մայրդ չի տեսնի,  
Տեսնե ել՝ խարել գժվար չի լինի:

Անուշն արդեն ծածուկ զնացել և Մարտի մոտ, մայրն եւ նկատել ե, բայց  
Անուշի խարում և նրան նախի, վախեցի... նանի, ներքեվում յես մարդիկ տեսա,

\*) **Фет.**—Мать, эту штуку усмотрела

И в мни сомнение возымела

У этой бабы чуткий нос....

\*\*) **Фет.**—О Боже! Ну как мать идет! Я все дрожу.

**Холопков.**—Ах, Боже мой! Не мать ли уже? Спасите!

Կարծեցի թուրքի և ին լողանում:

Մարթան իրավունք ուներ, իրոք գժվար չեղալ խարել —

Անիծում և ծեր մերը բարկացած

Իրեն մտացկոտ, վախկոտ Անուշին:

Աւրեմն՝ պարզ ե, միկնաւոյն «Դրացուհու տունը» տեսարանի ամարեկը մո-  
տիվներից են թելադրոված VIL հատվածում՝ Անուշի մոր բնութագրի արտա-  
հայտության ձեւը և այդ հատվածի անբաժան մասը կաղմող՝ IX հատ-  
վածի բովանդակությունը:

«Դրացուհու տունը» տեսարանին հաջորդում և «Փողոց» տեսարանը,  
վորն անտեսված ե, ապա հաջորդում և «Պարտեզ» տեսարանը,  
վորին հակադրված ե VILL հատվածը: Այստեղ Մարգարիտն ու Ֆառուտը մեղ  
ներկայանում են առաջին անգամ՝ նրանց հայտնաբերած հոգեբանու-  
թյան իշխող մոտիվներն են: — Մարգարիտի սերն ու մոռացվելու մտավախու-  
թյունը և ֆառուտի սիրո ապացույցներ ներկայացնելու մտահոգությունը: Այստեղ Անուշն ու Սարոն ներկայանում են նույնպես առաջին անգամ՝ միասին:  
որանց հայտնաբերած հոգեբանությունն ունի նույն մոտիվները — Անուշի սերն  
ու մոռացվելու մտավախությունը, Սարոյի՝ սիրո ապացույցներ ներկայացնե-  
րու մտահոգությունը: Մեկ դույդի հանդիսման վայրը պարտեզն ե, մյուսի-  
նը՝ ձորը:

Մարգարիտ—

Կերթաք և ինձ կը մոռնաք...

Ճիմա եք գուրք իսոսում տաք տաք...

Ա'սի, թե մի վայրկայն կը հիշեք զուք ինձ,

Յերբեք չիմ հանի յես ձեզ իմ մոքից:

Իսկ վերջում, յերբ ֆառուտը ցանկանում է ուղեցցել՝ նու պատասխանում  
է —

Վուչ, վուչ, մհաք բարով, մայրս կը տեսնի:

Անուշ—

Թող, դանչում են ինձ... մերս կիմանա...

Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես.

Ճենց յես եմ մենակ լալիս ու տանջվում,

Դու սարի լանջին խաղեր ես կանչում...

Վազուց, վազուց և զու ինձ մոռացել.

Յես յերբ եմ յեկել եսուն քարացել,

Ռւ մնում եմ քեզ, մնում, անիրավ,

Ենքան մնացի՝ աչք չուր դառավ:

Յերկու աղջիկներն ունեն հոգեկան նույն բովանդակությունը, բայց նր-  
անց արտահայտությունները վորոշ նրբությամբ տարբերվում են: Մեկի տա-  
րակուանը հիմնավորված է զասակարգային խրատությունը, հավանականու-  
թյունից երգում, համեմատաբար կրազորական ե, մյուսինը՝ հիմնավորված  
ե իր լքյու վիճակով, իրականությունից երգում, հանդիմանական, մեղա-  
դրական ե:

Անուշի և Մարտի միջն զասակարգային խնդիրը, բնականաբար, չեր կա-  
բոզ լինել, այդ պատճառով հաջորդ Անուշը և քարայր» տեսարանից առ-



Են վոր գիշերով շըհու եմ փչում,  
Են ո՞ւմ եմ կանչում.  
Են վոր մոլորված նստած եմ մնում,  
Ո՞ւմ հետ եմ լինում,  
Են վոր հառաջում ու ա՛խ եմ քաշում,  
Են ո՞ւմ եմ հիշում:

Ֆառւստը սիրո ապացույց ե բերում հայացքը և ձեռք սեղմելը, վորոնք փոխարինում են խոռովի անբացատրելին. Սարոն ապացույց ե բերում լանջերին խաղ ասելը, դիշերով չու փէւլը, վորոնք փոխարինում են Անուշի հետ խոսելուն կամ նրան կանչելուն: Ֆառւստը հողով ու սրտով Մարդարիտի հետ ե. Սարոն մոլորված, նստած լինելով՝ Անուշի հետ ե. Ֆառւստը՝ Մարդարիտին մոռանալ չի կարող, Սարոն հառաջելով ու ա՛խ քաշելով Անուշին հիշում ե (մոռանալ չի կարող):

Ֆառւստն ի վերջո դրդովելով Մեֆիստոյի ցինիկ ակնարկներից՝ Մարդարիտին կործանելու վորոշմած ե վերջացնում իր խոսքերը. —

Նորա դրկումն ե յերջանկությունը,  
Թող նորա կրծքի դդամ ջերմությունը...  
Սրտիս յերկոյուղը փարասիր, ո՞վ դե,  
Լինելուն լինի, և այնուհետեւ  
Նորա որհասը ինձ վրա ծանրանա,  
Յեվ նա ել ինձ հետ թող վոչնչանա:

Սարոն զտնվելով Ֆառւստի վիճակի մեջ՝ դրդադրում ե նրա վորումը և դդում ե Անուշի կրծքի ջերմությունը. —

Ա՛խ, Անուշ, Անուշ, անսաստված Անուշ,  
Սրբեցած, անուժ

Հառաջեց հովիվն ու սրտին ընկալ,  
Հալլվեցավ, հանգալ...

Հաջորդ «Գրետինի սենյակը» աեսարանում ներկայանում ե Մարդարիտն իր նշանակոր տեհնչանքի արտահայտությամբ դեպի Ֆառւստը:

«Անտառ և քարայր»-ում Մեֆիստոն նկարագրեց Մարդարիտի սպասուական վիճակը, այժմ սա ինքն ե հայտնվում այդ վիճակի մեջ: Այսուեղ Ֆառւստը նախապատրաստվեց Մարդարիտին կործանելու, այժմ սրա մեջ ե տրամադրություն ստեղծվում կործանվելու:

Մարդարիտի այս տրամադրությամբ հանդես ե դալիս և Անուշը: Այս մոտիվն ողտագործված ե համարլա քսան տարի հետո, պոլսական հրատարկությամբ: Բայց վոխսանակ «Պարտեղ» և «Անտառ և քարայր» տեսարաններին համապատասխանող VIII հատվածից հետո՝ զետեղված ե նույն այս հատվածում, կցված Անուշի մեղադրանքներին: Հասկանալի պատճառով: — Յեթե տեսարանների և հատվածների նույն հաջորդականության պահպանման համար այս նոր մոտիվին հատկացվեր մի առանձին հատված՝ ձորի տեսակցությունից, ուրեմն Անուշի անկումից հետո, սովա անխուսափելիորեն փոփոխության պիտի յենթարկվեր այդ անկումն արդեն քսան տարի առաջ իրողություն ներկայացնող VIII հատվածը: Ներկա ձե-

վով ընտրված ե անհարմարությանց փոքրադույնը: — թեպետև հետաձգվել ե Սարոյի պատասխանը, համենայն դեպս զարձյալ անկումից առաջ Անուշի մեջ ևս շեշտվում ե կործանվելու տրամադրություն, և այսպիսով՝ պահպատճառ ե նրա և Մարդարիտի հոգերանական վիճակների նույն հաջորդականությունը:

Մարդարիտն իր տեսչն արտահայտում ե ֆառւստի բացակայության, իսկ Անուշը՝ հետեւապես՝ Սարոյի ներկայության: Ահա այս պատճառով, ըստ կարելվույն, նա հետացնում է բացակայության հետ կապված տարբերը, առնում ե I, II, IX և X տեսերում արտահայտված՝ յենթակայի վրա դրացումի դործած աղղեցության մոտիվը միայն. —

Մարդարիտ. — Կորալ իմ հանգիստ,

Սիրտս ծանր ե խիստ,  
Անձկությունն ու վիշտ  
Տանջում են ինձ միշտ:  
Խեղմուկ գլուխս ել  
Խելագարվել ե,  
Միտքս շփոթվել  
Ու խանգարվել ե:  
Յ'իս, կարողանամ  
Նորան ամեն ժամ  
Պինդ պահել գրկիս,  
Կշտանա հովիս:  
Համբույրներ անվերջ  
Դրոշմեմ շրթունքին,  
Ցեպես մնամ:

Համբույրների մեջ

Փշեմ իմ հոգին\*):

Անուշ. — Ինձ չես լսում,

Չես ափսոսում,

Ել չես ասում,

Ի՞նչ կըլինեմ յես.

Ցես կըլառվեմ,

Հուր կըդառնամ,

Ցես կըհալվեմ,

Զուր կըդառնամ,

Ցես չըդիտեմ,

Ի՞նչ կըդառնամ,

Թե վոր մին ել

Ցսպես մնամ:

Անուշն այս նոր մոտիվը ներդաշնակում ե նախորդի մեղադրական վաճեցեած առաջին չորս տողերով. հաջորդ տողերով առանձին ուշադրություն ե դրամնում հետեւողության տալ արտաքին բնույթ, այդ պատճառով, փոխանակ պատճառմի՝ արտահայտվել ե կրքի աղղեցությունը յենթակայի վրա. բայց պահպանվել են ոռուսական թարգմանությունների չորս վանկանի տողերը, տեղտեղ հարմարվելով նույնիսկ նրանց յամպային դրության:

Անուշն իր տեսչին ավելացնում ե ուռենու պատմությունը, վորը Շեքսպիրի «Ոթելլո»-ի ուռենու յերգի փոխադրությունն ե: Տեղտեմոնան մահվան անկողին մանելուց առաջ պատճառում ե Եմիլիային. — «Մայրս մի մաժիշտ ուներ, Բարբարա առւնով. խեղը սիրում եր, և սիրածը շողորթ

\*) Խոլոդկովսկի,

Պոկоя нет,  
Душа скорбит,  
Ни что его  
Не возвратит.  
Мой бедный ум  
Смущен, молчит,  
Мой бедный дух  
Сражен, разбит.

К нему заnim

Стремится грудь,

К нему прильнуть

И отдохнуть.

Его обнять

И тихо млечь

И целовать

И умереть.

գուրս յեկավ և նրան լքեց, մի ուսենու յերդ գիտեր, մի հին բան, վոր նրան բախտին հարմար եր գալիս և այդ յերգը յերգելով մեռավ»: Տեղամանան յերգում և այդ յերգը, եր բախտին ևս հարմար տեսնելով —

Ուսի տարկ խղճալին նոտած և տրամագին,  
Յերգեցեք զուք, կանա՛չ ուսենի,  
Զեռքը զբած իր կրծքին, պլուիր կափ իր ծնկին,  
Յերգեցեք ուսենի՛, ուսենի՛,  
Մանսրակ մի վասկ մբմնջում և կողքից,  
Յերգեցեք ուսենի՛, ուսենի՛  
Քարերն ել փափկում են իր աղի արցունքից  
Յերգեցեք ուսենի՛, ուսենի՛:  
Այն դալար ուսենուց ինձ պատկ հյուսեցեք,  
Թեև նա լքեց ինձ, մի՛ նրան բամբասէք:  
Մասցի գու կեղծ ես, ուրիշին սիրում ես,  
Յերգեցեք ուսենի՛, ուսենի՛:

Նա ասաց «քեզ ինչ փույթ ուրիշին կը սիրես»:

Անուշը նույնական կրկնում և ուսենու այս մոտիվը, վորովհետեւ իր բախտին ևս հարմար և տեսնում —

Ասում: Են ուսին  
Աղջիկ եր ինձ պես,  
Մնում եր յարին  
Ու շեկագ նա տես.  
Իեղճը դողալով  
Անհույս կոտցավ  
Դարդից չորացավ,  
Ուսենի դարձավ:

Զրերի վրա  
Գլուխը կոխում  
Դեռ գողում և նոս  
Ու լարիս կամաց,  
Ու ամրովչ տարին  
Մի միաք և անում,  
Թե յարը յարին  
Վոնց և մոռանում:

Տեղամանայի յերգի իմեզմ աղջիկը ձեռքը դրած իրծքին, գլուխը կախած ծնկին՝ նստել և վասկի իսպիքին, ուսենու տակ և լաց և լինում, վորովհետեւ յարը տրիշին և սիրում: Իսկ Անուշի հիշած խեղճ աղջիկը՝ անհույս կոտցած՝ սպասում և յարին, բայց յարը նրան լքում և, աղջիկը դարդից չորացած և, ուսենի յեղանում: Ճրերի վրա գլուխը կախած՝ լոց և լինում, ու մտածում՝ թե յարն իրեն գո՞նց և մոռանում: Պարզ ե, նույն աղջիկը, նույն յարը, նույն ջուրը և նույն ուսենին, այն տարրերությամբ, վոր Անուշի հիշած աղջիկը փախում և ուսենու և Տեղամանայի յերգի աղջկա վիճակի մի մասն անցնում և այդ ուսենի աղջկան: Այս այլափոխության մեջ ես վոչինչ կա առօրինակ: Տեղամանան վկայում ե՝ վոր նամիշան այդ յերգը յերգելով և մեսել, ուրեմն գարդից և մեսել, իսկ Անուշի հիշած աղջիկը՝ դարդից ուսենի յեղարձել: Շատ բնական ե՝ Տեղամանայի աղջկա վիճակի և ուսենու միջեւ արտաքին յերեւութիւ մի նմանություն և ստեղծվել, բայց այդ «Յերգեցեք զուք, կանա՛չ ուսենի՛, ուսենի՛» ուրֆենը և վտակի ներկույթյունը՝ առանց մեծ յարումի արթնցրել և դարդից փոխանակ մեռնելու՝ ուսենի գառնալու գաղափարը:

Տեղամանան Բարբարայի մասին ասում ե թե՝ «մի ուսենու յերդ պի-

տեր, մի հին բան»: Իսկ Անուշն սկսում է «Ասում են ուսին...» ուրեմն դարձյալ մի հին բան ուսենում մասին:

#### IV

Ասայիմ թողնենք «Ֆառաւա»-ը և հետեւենք «Անուշ»-ի գործողության Հաջորդ վիճակին—Համբարձման առավոտյան նկարագրության: Պերճ Գոռչյանի «Սոս և Վարդիթեր»-ի մեջ հետեւյալ ձեռվ և նկարության վիճակի արարողությունը: «Համբարձման չորեքշարթի որը... ամեն պրված կրծքի իրա թորունն առած՝ գնացին... իգանիքը (այդիները), ձորերը, յահինի իրա թորունն առած՝ գնացին ու հարսները կանանչ պատուելակիոնդը ծաղիկ քաղելու... Զահել աղջկերքն ու հարսները կանանչ պատուելակիոնդը թմբերի, յա թե չե ու կարմիր շորերով, վաղելազ անելով, ընկան յիքանոնց թմբերի, յա թե չե գրեկարի (քարքարոս տեղերը) մեջը: Մինը վագում ա մի ծաղկի վրա, վոր քառ- զի, մեկելը տեսնելով նրան, ինքն ել դառան նման թռչոտելով գալիս ա նը- զի, մեկելը տեսնելով նրան, ինքն ել դառան նման թռչոտելով գալիս ա մը- բան մստ ու նրա ձեռիցը չմրում, ինքը քաղում... մինը փշատու ձուղքը կը- ուացրած՝ նրա ծաղիկներն ա ճղովվ կոտրատում: Մեկելը զեղին ու կարմիր խնկածաղիկը վեշը լցրած.... մինը բաց-ինալուկի ծաղիկա խոտիտ արած թերին ա- րերում, վորն ել բուլի-բուլի ծաղիկ, յա թե չե ծաղիկ գոգն ածած թերին ա- վատմը կիանոնց կատին կիանեցին... ծաղիկը քաղելուց հետո յեկան ըուլով- վանքի նստեցին... ծաղիկը գովկելն սկսեց նանումը... վեր կարավ բարակ ձեռնով.

Խնձոր ունիս գծածա

Զան գյուլում են:

Կումբը վերապանում և տուն և այնուեղ շարունակում և գովել ծաղի- կը —

Համբարձում, յայլա՛,

Յայլա՛ ջան, յայլա՛,

Համբարձումն յեկել ա են:

Հաջորդ առավոտ կտարում են վիճակահանության արարողությունը: Վեալիր հավաքվեցին ու Խանումը թերաց մի պստի հինդ տարեկան անժեղ աթալիք հավաքվեցին ու Խանումը: Գլխին քցեց մի կարմիր քող ու վիճա- պակաս... նոտեցրուց նրան մեջտեղը: Գլխին յեկան կարմակ աւ տակց: Ճի բղուղը ալեց ձեռը, ինքն ել վեր կալավ ու տակց:

Սիրել եմ սերն յերեսին

Բեհան թերն յերեսին են:

Յերեխեն ձեռը տարավ ու հանեց.... հետո Խանումը մի տուն ել քան ա- մեց, մին ել գուրս յեկավ.... վորի վիճակը լավ գուրս յեկավ, վորինը վարու.... վերջը Խանումն ասեց:

Յերթիք յերթիք բռնել ես,

Յերթիք տակին կանել ես,

Իմ համը քեզ աղջիկ չի տալ,

Անուշ քունդ կտրել ես:

Արի քու թալահը տես, վայ նրան, ինչ աստված չի հաջողի: Ես վայը վարդիթերի վլխին յեկավ. եղումը նրա մատանիքը գուրս յեկավ.... ամենքը: Հուր գառան ու ոտառած մնացին իրար յերեսին մտիկ տեսն, վոր աղջիկը ուսնդը գցեց, սկսեցին ամենքը մի դհից սիրտ տալ, մին ասեց. Ճի-

Ճակն ի՞նչ ա, վոր ավաբառմ ես, մեկելը՝ թե սարքովի բան է, կնանոնց խել—  
քից դուրս յեկած են, են»:

Ահա թե ինչպես են կարագրված «Անուշ»-ի վիճակահանության արարու-  
դությունը—

Համբարձումն յեկավ, ծաղկունքը ալվան  
Զուդել են հանդել նախզուն դորգերով,  
Փունչ-փունչ աղջիկներ սարերը յելան  
Վիճակ հանելու աշխուժ յերգերով:

Համբարձում յայլա,  
Յայլա ջան, յայլա հն.:

Յերդ ու բույր խառնած՝  
Թև-թևի բռնած՝

Զուդում են լեռներ,  
Ծաղիկ են քաղում,  
Ծաղիկ հետ խաղում  
Ինչպես թիթեռներ:

Համբարձում յայլա հն.:

Յեկավ համբարձում

Ծաղկով դարդարված,

Մեր բախտին հարցում.

Ո՞վ ե մեղ գրված հն....

Թնդում են յերգեր, խնդում են սրտեր,

Աւ չուրջ բոլորած վիճակ են հանում.

Յելում ե մեկին իր յերազն ու սեր,

Մյուսի մուրադը սրտումն ե մնում:

Պառյոտ ե տալի վիճակը նորից,

Բուշուշը դիմին ծաղիկ ծաղկամեր,

Ի՞նդում «Ճան գյուլում» մատաղ սրտերից,

Հետը զբուզը վում են ծաղկոտ սարեր:

«Այ թուխ մաղավոր աղջիկ,

Այ սարի սովոր աղջիկ,

Ջիգարին գյուլլա դիպչի,

Ով վոր քեզ սիրի, աղջիկ»:

Ո՞չ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,

Սևաբախտ քուրիկ, նաղելի Սնուշ,

Քու ձեռը կոտրի, ով վոր հանեցիր,

Աւ վողջ մնացին մուրգված ապուշ:

Սուտ բան ե, քուրիկ, դռւ մի հավատա,

Լոկ պատահական մի չար խոսք ե սա,

Սիրտ մի կոտրի սուտ բանի համար,

Քու խաղեւ խաղա, ջան գյուլում ասա:

Թեղեան առաջին իսկ տպավորությամբ կարելի յե յեղակացնել յերկու-  
նեաբարդությունների նմանության, հետեւապես «Անուշ»-ի հետեւզության-  
մասին, բայց իրավացի կերպով կարելի յե առարկել, թե Հայաստանում ա-

մեն աեղ նույն ձեռվ ե կատարվել վիճակահանությունը, այու պատճառով  
զարմանալի չե, յերբ տարբեր հեղինակների կողմից, անկախարար, մասնա-  
գոր նման գծերով ե նկարագրվել այդ արարողությունը: Բնդունենք այս ա-  
զոր յեկամուն ել վիճակը վատ վախճան ե գուշակում, վոր յերկուսն ել ըլր-  
վոր յերկուսն ել վիճակը վատ վախճան ե գուշակում, վոր յերկուսն ել ըլր-  
վապատից միթթարական խոսքեր են լառմ, վոր յերկուսի վիճակահանու-  
թյունից առաջ ուրիշների վիճակն ե համուռմ, իսկ ամենից առաջ խմբերով  
ընկեր բարձրանալու, ծաղիկ հավաքելու գործողությունն ե Համբարձում յայլա»-  
վում, վոր վերջապես անընդմեջ «Ճան գյուլում»-ը և «Համբարձում յայլա»-  
ները սարերն են թնդացնում: Մենք յեզրակացնում ենք—այստեղ միենույն  
արարողության վոչ թե մասնավոր գծերի՝ այլ ամբողջական կառուցվածքի  
արարողության վոչ թե մասնավոր գծերի՝ այլ հեղինակների կողմից, անկախա-  
այնպիսի նույնությունն կա, վոր տարբեր հեղինակների կողմից արարա-  
սար, յերբ և իցե չի կարող հզացվել: Բայց այստեւամենայիլ զեռ շարունա-  
կում ենք յամիմատությունը. և ահա սպարզվում ե՝ վոր «Անուշ»-ի ա-  
ռաջին ասաւ տողերի—ծաղկահավաքի—նկարագրությունը «Մոս և Վարդի-  
թեր»-ի ծաղկահավաքի նկարագրության հարազատ ամփոփումն ե: Այսուղ  
հարաների և աղջիկների «թորունն» ե լցվում թմբերը և զոերը, ծաղիկների  
հարաների և աղջիկների «թորունն» աղջիկներն են սարերը յելնում «ծա-  
ղիկ են քաղում, ծաղիկ հետ խաղում, ինչպես թիթեռներ»: Իսկ շարունա-  
կության մեջ՝ այստեղ՝ «Խալիս հավաքվեցին, Խանումը... բերեց մի պատի  
կության մեջ՝ այստեղ՝ «Խալիս հավաքվեցին, Խանումը... բերեց մի պատի  
կության մեջ՝ պատիկ բուրգը տվեց ձեռը վոր հանի», իսկ այստեղ. «Ու-  
շուրջ բուրգած՝ վիճակ են հանում... քուշուշը գլխին ծաղիկ ծաղկամեր»:  
Այստեղ այլոց վիճակահանության առթիվ ասվում ե. «Վորի վիճակը լավ  
գուս յեկավ, վորինը վատ»: Իսկ այստեղ՝ «Յելնում ե մեկին իր յերազն ու  
սեր, մյուսի մուրադը սրտումն ե մնում»: Այստեղ Վարդիթերի վիճակի առ-  
թիվ ասվում ե. «Արի քոռ թալահը տես, վայ նրան, ինչ ասաված չի հաջո-  
թիվ ասվում ե. «Արի քոռ թալահը տես, վայ այստեղ՝ Անուշի վիճակի առ-  
թիվ, ես վայը Վարդիթերի գլխին յեկավ», իսկ այստեղ՝ Անուշի վիճակի առ-  
թիվ. «Ո՞չ, ինչ սե վիճակ քեզ բաժին ընկավ, սևաբախտ քուրիկ, նաղելի Ս-  
նուշ»: Այստեղ նույն առթիվ՝ «Ամենքը ջուր գառան՝ ու սառած մնացին ի-  
նուշ»: Այստեղ մաֆի տալով»: Իսկ այստեղ՝ «Ու վողջ մնացին մոլորված, ա-  
րար յերեսին մաֆի տալով»: Իսկ այստեղ՝ «Վիճակի միթթարում են. «Վիճակի ի՞նչ ա, վոր ավա-  
պուշ»: Այստեղ Վարդիթերին միթթարում են. «Վիճակի ի՞նչ ա, վոր ավա-  
պուշ»: Սարքովի բան ա, կանաց խելքից դուրս յեկած»: Իսկ այստեղ  
տում ես... Սարքովի բան ա, կանաց խելքից դուրս յեկած»: Այստեղ Վարդիթերի գլխին յեկամա-  
րան մի չար խոսք ե սա, սիրտ մի կոտրի սուտ բանի համար»:

Այժմ վերագառնակ «Ֆատուս»-ին:

Մարդարիտ տենչին անմիջապես հաջորդում ե «Մարթայի պարտեզ»  
տեսաբանը, ուր տենչով տրամադրված Մարդարիտի հոգին յենթարկվում ե

**Ֆառևստի** առաջարկած անձնատվության պարմաններին։ Այս տեսաբանի կենտրոնական մասը, սակայն, կազմում է սիրահարների խառնկցությունը կրոնի մոտին։ Մարդարիտը կրնական դղացումից թելտղված՝ պատճեմ է Մեֆիստովի մասին։

Կարծես որտումս գտնակ է ցցում,  
Յերբ վոր ինձ վրա հայոցք և զցում . . . .  
Ա՛յ, միշտ պղտորում ենա ի՞ս արյուն . . . .  
Սոսկում չեմ նայել նրա յերեսին . . . .  
Յերբ յերեկում ենա դրան չե՞ցքին,  
Ծաղրով նայում ե իր չուրջն ամենքին  
Յեվ յերեկում ե սաստիկ բարկացած  
Յեվ պարզ գրված ե նրա ճակատին,  
Թե սիրելի չե վոչ վոք նրա սրտին . . . .  
Յեվ այդ բանը ինձ տանջում և մաշում :

Իսկ չարագուշակ վիճակից ներշնչված՝ Անուշը պատճեմ և դարձիչի մասին։

Ասում են՝ մի որ՝ յես որորոցում,  
Մի պատավ դարվիչ մեր գուռն և զալիս,  
Իր խաղն ե ասում ու բաժին ուղում,  
Իմ նանը նրան բաժին չի տալի.  
Կորի՛, ասում ե, կորի մեր դոնից,  
Յերեխաս ճաքեց, հեռացիր, գնա.  
Աւ դարվիչն ենտեղ անիծում ե ինձ,  
Թե զրա որը լացով անց կենա . . . .  
Սիրոս ել միշտ փակ, սիրոս ել միշտ մութ,  
Ինչ կա, չդիտեմ, իմ առջև պահված։

Մարդարիտը բնութագրում է Մեֆիստովին և նկարագրում է նրա ներկայությունից զգացած սարսափը։ Վիճակահանության նրա կարագությունը հանդիսացել է իր շրջանակ, ուր նկարվել են հերօսի հոգեբանության հաջորդ գծերը՝ համապատասխան Մարդարիտի հոգեբանության հաջորդական զարգացման։ Անուշն առնում է Մեֆիստովից գծեր և բնութաղբում ե ի՞ր դարվիչը. առնում է նրա ներշնչոծ սարսափից տարրեր, իբր իր սարսափը՝ ներշնչված դարվիչից, և այս բոլորը, վորպես անցած դեպքերի հեղողություն, փոխադրում է չարագուշակ վիճակի մուայլ մթնոլորտը և ճարտարությամբ ներդաշնակում իր հոգեբանության հետ։

Մեֆիստոն հայունվում է դռուն չեմքին և իր յերեկութով կարծես դտնակ և ցցում Մարդարիտի սիրուը<sup>\*)</sup>, պառավ դարվիչն ել հայտնվել և դռան չեմքին և, անշուշտ, նույնպես իր յերեկութով, «ճաքեցրել» և որորոցում պառկած Անուշին։

Մեֆիստոն հայունվում է սաստիկ բարկացած և վոչ վոքին բախտագրուու-

<sup>\*)</sup> **Холодков.**—Его присутствие во мне волнует кровь.

**Струговщиков.**—И вид имеет он такой,

Что даже страх небольшой ощущаю.

Ժյուն չի ցանկանում<sup>\*\*</sup>) . դարվիչը բնականարար նույնովես բարկացել է մոր հանդիմանությունից և անիծել է Անուշին։ Մեֆիստոյի ներշնչած նախաղացումներից տանջվում, մաշվում և Մարդարիտը. դարվիչի ներշնչած նախաղացումներից միշտ փակ է ու մութ և Անուշի սիրալը։ Մարդարիտի մոայլ նախաղացումներին ի միսիթարություն՝ ֆառւստը պատասխանում է. «Վոչ, մի վախենար, իսկ սիրուն, նրա պեսներն ել պետք և վոր լինեն<sup>\*\*</sup>)։ Մենք տեսնք՝ վոր աղջիկների խումբը միսիթարում եր Վարդիթերին՝ շարագուշակ վիճակի առթիվ։ այժմ ֆառւստը միսիթարում և Մարդարիտին՝ այնտեղ լսակղծված մի նման հոգեբանական վիճակի առթիվ։ Անուշի ընկերուհիների միսիթարական խոսքերը հետեւողություն ելին Վարդիթերի ընկերուհիների խոսքերի. բայց դարվիչի պատճությունից հետո՝ նրանց մեջ ձուլվում են և տարրեր՝ ֆառւստի արտահայտությունից»։

Մի՛ տրտմիր, Անուշ, մի խելառ դարվիչ, մի անեծք հիմար։

Հանդիսա կաց, քուրիկ, մի՛ վախիր եղքան։

Անշուշտ վիճակահանության առթիվ Անուշի հուսահատությունը արդյունք պետք է համարել Վարդիթերի համար քաշված վիճակի ներշնչած մըտավախություններին, բայց միժամանակ ամենեին ուշադրությունից չըստեաք և վրիպի, վոր Մարդարիտն ևս տառապում և նույն մտավախությամբ։ —Ֆառւստը նրա մտսին հայտնում է . . . .

«Սաստիկ տանջվում և և վշտահար և,

Վոր ինձ պիտի կորած համարի»։

Հաջորդ «Ազրյուրի մոա» տեսարանում Մարդարիտը հանգիպում է Լիդիաներին, վորը հայտնում է՝ թե Բերելիսկենը «ինչ վոր ուտում և և ինչ վոր խմում և՝ յերկու հոգի յե այժմ մնալում»։ Այս մտսին յեղած առթողջ խոսակցությունը հուսահատեցնում է Մարդարիտին, վորը հաջորդ—«Յեկեղեցու գաղիթը» տեսարանում՝ տիրամոր պատկերի առջև հնչեցնում է իր գորրը։ Անուշն ևս ունի նման մի վողբերգական մենախասություն՝ դարձյալ չարագուշակ վիճակի ազգեցության տակ։ Այս վողբը, տենչի նման, վերամշակված «Անուշ»—ի նախորդ հրատարակություններում գոյություն չուներ, ասածին անկամ հայտնվում է նույնպես պոլսական հրատարակությամբ, ուրեմն գարձալ մոտ քսան տարի հետո։ Թեպես կետեղվում է վիճակահանության չըջանակի մեջ, բայց հետեւում է Մարդարիտի հոգեբանության հաջորդական լիթոգրիֆին։

Մարդարիտը գտնվում է տիրամոր պատկերի սովոր, որան և ուզգում իր վողբը, վորը մի կախարդական փունջ և, հյուսված վշտից անթութեական լիթոգրիֆին։

<sup>\*)</sup> **Холодков.** Лицо его как будто выражает,

Что ни к кому он жалости не знает,

Лежит печать на злом его челе,

Что ненавидит всех он на земле.

**Струговщиков.** И будто сердится, когда заговорит

И... счастья не желает никому.

<sup>\*\*) Холодков.</sup> Чудак он, да и что нам до него за дело!

Անուշը գտնվում է սարերում, այբ պատճառով տիրամայրը փոխարինում է անորոշ «քախո» գաղափարով: Թեպեակ կաղմում է իր փունջը Մարդարիտի վշտից, արցունքից և ծաղկիներից՝ ընդհանրապես, բայց գտնվում է նրա 10—21 տողերի անմիջական ազդեցության տակ:

**Մարդարիտ.** — «Ա՛խ, ով է զբում,

Ինչպես է կրծում

Եւ մաշում ցավը իմ վոսկորները.

Ինչից է ինձնուկ սիրտով վախենում,

Ինչից դուքսում, ի՞նչ է ցանկանում,

Միայն դու զիտես, դու և դու միայն,

Ուր վոր գնում եմ,

Հետո առնում եմ

Այս ցավն, այս ցավն, այսուղ կրծքիս մեջ.

Եւ յերե մնում եմ

Մենակ՝ վոզբում եմ —

Ա՛խ, սիրտո, սիրտո կոտրվում իմ մեջ\*):

Անուշ. — Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ

Զեմ հասկանում գեղի ուր,

Դողում է պաղ նրա ձենից

Իմ սիրտը սե ու ախուր:

Դուք ել, սարի սիրուն ծաղկունք,

Թաքուն մի ցավ ունեք լուս,

Աչիները լիքն է արցունք,

Սիրտները սե ու ախուր:

Անուշի վոզբը առաջին տունը, տիրամոր փոխարեն բախտին դիմելու պատճառով, բավական չարչարված, հետեւապես, գորշ կերպարանք է ստացել, բայց այնուամենայնիվ այսքանը վորոշ է, վոր ներշնչված է Մարդարիտի առաջին վեց տողերից: Յերկու աղջիկներն ել միեւնույն հառաջով են սկսում իրենց վոզբը, յերկուսի սիրտն ել միեւնույն մոռայլ կերպարանքն ունի, յերկուսն ել ունեն ձգտումներ, վորոնք հայտնի յեն տիրամոր կամ բախտին: Անուշի յերկուրդ տունը կրկնում է Մարդարիտի 7—12 տողերի բովանդակությունը:

\*) **Холодков.** Увы, кто знает,

Как изнывает

Вся грудь моя, тоски полна

Как душа моя томится,

Как дрожит, куда стремится,

Знаешь ты, лишь ты одна!

С людьми я — неподъно

Мне больно, больно, больно,

Везде тоскую я!

Одно ли горе прячу

Я влаку, плачу, плачу,

И рокится грудь моя.

այն տարբերությամբ՝ վոր Մարդարիտի թաքուն ցավը, աչքի արցունքը և սե սիրտը հատկացնում է ծաղկիներին: Անուշն այդ յերկու տներին ավելացնում է և՛ հետեւալը: —

Ա՛խ, ծաղկիներն են աշխաբհում

Տանջվում են միշտ եսպես լուս,

Տրորվում են ու թառամում

Սիրտները սե ու տիսուր:

Այս տունը միշտ նորություն չի ասում: իբր նախորդ յերկուսի յեղակացություն՝ կը կնում է նրանց բովանդակությունն ու ձեր:

Մարդարիտի վոզբըն հաջորդում է «Գիշեր» տեսարանը, ուր ֆառակահացու կերպով վիրապորված վալենտինը հանդիմանում է իր քրոջ՝ Մարդարիտին, ֆառուստի հետ ունեցած նրա հարաբերության պատճառով:

Անուշի վոզբից հետո ոկտում է նախնական «Անուշ»-ի գործողությունը, կախվի Նկարագրությունը:

Սարոյի և Մոսկի գոտեմարաը հեռավոր գծերով նման է ֆառուստի Վալենտինի մենամարտին: Այս պատահական, արտաքին նման վիճակից հետո՝ իբր հարմար վայր՝ վերամշակված «Անուշ»-ի մեջ զետեղված է հաջորդական կարգով «Ֆառուստ»-ի համապատասխան վիճակը: — Մարդարիտի պատմավածքը Մոսկին հանդիմանությունները կրում են իրենց մէջավայրի կնիքը, ունեն արտահայտության տարրեր ձեւը, այսուամենայնիվ Սարոյի և Անուշի խոսակցության կառուցվածքը, վորոշ գծերով, պահել և Վալենտինի և Մարդարիտի արտահայտության կառուցվածքի հետքը: Վալենտինը, հիշատակելով քրոջ արարքը՝ խրատով, հայհոյանքով և անեծքով խան դառնություն մաղձը թափում է վրան՝ անվանելով նրան բռզ: Իսկ Սարոն, նույնպես հիշատակելով իր քրոջ արարքը՝ հայհոյանքով և խանչալի սպառնալիքով և վիճել լուծում, անվանելով նրան սաւտիկի խաքեբա: Վալենտինի հանդիմանությունների առթիվ Մարդարիստը բացագանչում է: —

«Տեր Ա.ծ., յեղայր, ինչ եմ լսում յես.

Եղբայր իմ, յեղայր, մի տանջիր դու ինձ:

Մոսկի սպառնալիքների առթիվ Անուշն է բացագանչում: —

Վա՛յ, վա՛յ, Մոսի ջան, ինձ մի սպանիր.

Սրանից հետո չեմ սիրել նրան

Վախենում եմ . . . սիրտո դոզբում և տերեվի նման . . .

Քո քույրը չե՞մ յես . . . իմ Մոսկին չե՞ս դու . .

Մարսակը և գոնե՛ բռպետական զղումն ակներեւ և յերկու աղջիկների արտահայտությունների մեջ:

«Գիշեր» տեսարանից հետո՝ Մարդարիտը հանգես և զալիս «Մայր յեկեցիք» տեսարանում, վորն անստեսված է, ասկա կատարվում են «Վալպուրգիշեր»-ի վայր՝ զան հանդիմաները:

Վալենտինի սպառնությունից հետո՝ Մեֆիստոն փախցնում է ֆառուստին: Հարց լեռները, նրան մասնակից դարձելով զիվային տոնակատարություններին: Ալդակ, լեռների վրա, նա հիշում է հեռավոր Մարդարիտին: Զարթ-

Հուման և խղճի խոյթը և նրան նետում թախիծի դիրկը : Թագում և՝ թէ տհսնում է . . .

Հեռուն կանդնած մենակ մի ապջեկ ,  
Դեմքը զունաթափ , սակայն գեղեցիկ . . .  
Մեռած աչքերը մնացել են բայց .  
Նոցա չե փակել մի ձեռք սիրազդաց ,  
Գրետիենիս փափուկ կուրծքն եռու , ավա՞զ .  
Նորա մարմինը աննման , չքնաղ .  
Ի՞նչ հրմանք , ի՞նչ վիշտ նորա հայացքում ,  
Ինձ սաստիկ ուժով իր մոռ և ձգում :  
Նորա գեղեցիկ պարանոցին , ան՛ո ,  
Կա մի կարմիր բիծ բարտի թելի պես ,  
Վոր սուր գանակի բերանից չե լայն :

Նախնական հրատարակության մեջ Անուշի վերակարձը և Սարոյի սպանությունը կատարվում են նույն որը : Վերամշտկված հրատարակությունը՝ վերագրածի և օպանության միջև որերի տեղողություն և ստեղծվում , վորուսպի հնարավորություն տրվի Սարոյին՝ մտաբերելու Անուշին և յերգելու քայարին :

Այդ քայաբին ամբողջությամբ թախիծի արտահայտություն և . . . մի թախիծ , վորքան արդյունք սպանվելու յերկուողի , առավել և՛ ապագայում «աչքը լալով» մնացող սիրականի վերաբերմամբ դարձնող խղճի խոյթի . . .

Ա՛խ , կը մեսնեմ , ամանա  
Վայ թե հանկարծ իմանա ,

Յես սողառվեմ ևս ցավից ,  
Աչքը լալով նա մնա :

Ինչպիս մոր ֆառուտի արտահայտությունը զբլած և ցույց տալու հերոսի հոգեկան վիճակը հեռու մնացած սիրականի մասին՝ պարզ և՝ վոր Անուշի վերագրածի և Սարոյի սպանության միջև տարածություն ստեղծվեց նույնական ցույց տալու հերոսի հոգեկան վիճակը հեռու մնացած սիրականի մասին : Վոչ միայն հենց այս վայրկյանի ընարությունն ե , ուրեմն , հետեւզական , այլև հետեւզական և վայրկյանի բովանդակությունը —հերոսների բուռն թափեցը : Թեպետև Սարոյի թախիծի արտահայտության ինքնուրույն միջացների պատճառով ամբողջ բայաբին միմիտին արտաքին հետեւզության բնույթ և ստանում , բայց ուշադրություն հրավիրելու համար ստիպված ենք կրկնել վոչ պակաս զորավոր ներքին նման տարրերը : —Յերկուան ել դտնվում են լեռներում . յերկուսն ել բաժանված են սիրականներից , յերկուսն ել մտաքրում են հեռավոր սիրականներին , յերկուսն ել լեցվում են թախիծի զգացմանքով , յերկուսն ել նորիազգում են ապագան . —մեկը՝ վոր Մարգարիտը պիտի զլխառվի , մյուսը՝ վոր ինքը ողիտի սպանվի :

## V

«Վալլության Գիշեր»-վան հաջորդող «Ամողածած որ» և «Գիշեր» տեսաբաններն անտեսված են , իսկ հաջորդ ամենավերջին տեսաբանում ներկայացված և Մարգարիտի ինելագարությունը .  
Նախնական հրատարակության գործողությունից հետո՝ նոր ավելացած

XXVII հատվածում ներկայացված և Անուշի խելագարությանը , ամփոփված 101 տողերի մեջ : Այս տողերը , սակայն , հավասար հոգեկան վիճակի արտահարություն չեն : Առաջին 30 տողերը —անցվոր ախպոր թելագրաւթյունները և Անուշի պատասխանը հոգեկան անհավասարակշռության վոչ մի հետք չառնին , վորքան ել թախծառ լինին : Իսկ հաջորդ տողերը ներկայացնում են բուռն ինելագարությունը :

Հոգեկան տյու յերկու տարբեր վիճակներն արդյունք են յերկու տարբեր տողեցությունների : Առաջին մասի վրա աղղել և լերմոնտովի «Դեմքը , ինչ յերկորդ մասի վրա՝ «Ֆառուտ»-ը : Թամարայի և Անուշի նշանածներն սպանված են , նրանք վշտահար են , յերկուսն ել թելագրանքներ են բուռն : Թամարային խրառաւմ և անծանոթ ձայնը .

Մի՛ լար , գավակս , մի՛ լար զու խզուր ,

Քո արցունքները ըլպիտի թանան

Կենաասու ցալով գիակն անբարբառ ,

Նոքա լոկ կայրեն այտեր կուռական ,

Մեկով կըպատեն աշերգ պայծառ .

Նա այժմ հետու յե , բգգալ չի կարող

Ցեկ զնահատել վլչադ , թամարա . . .

Ի՞նչ արժե չնչին ցնորքը կյանքի

Ցեկ մի հետ կույսի լացն ու հառաշանք

Նորան , վոր հիմա հյուր և յերկնքի :

Վոչ , կորուսան ունայն մի արարչության ,

Հալատա , ով իմ հըեշտակ յերկնային ,

Արժան չե բնավ , վոր մեկ խոկ վայրկյան

Տիրություն պատե այդ սրտիդ անգին :

Յերկուային լուսավորների և ամպերի որինակով հեղթակացնում ե . . .

Դժբախտության ժամանակ

Նորանց միայն միատ բեր ,

Ցւղիր անդիշան նոցաւ պես ,

Դեպի աշխարհն անտարբեր :

Իսկ յերբ գիշերն հանի՝

Յես , ով կույս չքնազ , կըթուչեմ քո մոռ ,

Բեկ հյուր կմնամ մինչեւ առավատ .

Յես քո մետաքսյա արտեվանունքին

Վոսկյա յերազներ կրցողեմ լուին\*) :

Յերբ թամարան անկողին ե մանում , «Անիսոս մի յեկվոր» թելալում և նրա անաբին . յերբ նա մենաստանում ե արդեն , պատահանի մոռ հաճախ նստած՝ սպասում ե «Ալյուր»-ին . իսկ յերբ զեմ առ գեմ կանգնած և այդ այցելույին՝ նրան անվանում են «Բնկեր պատահական» :

Արդ , թամարային խրառաւդ այս «Յեկվոր» , «Ալյուր» , «Պատահական ընկերն» ե , վոր ստանում ե «Անցվար ախալեր» անունը և ապիս և Անուշին իրառները .

Սիբուն աղջիկ , ի՞նչ ես լալիս

\*) Թարգմ . Միքայելյան . Թիֆ . 1901 թ .

Եղակս մենակ ու մոլոր,  
ի՞նչ ևս լալիս ու ման դալիս  
ես ձորելում ամեն որ:  
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում,  
Մայիս կը դա, մի քիչ կաց.  
Թէ լալիս ես յարդ ես ուզում,  
Ա՛լի, նա գնաց, նա գնաց...  
Արտապլելով, լալով եղակս,  
Յետ չես դարձնի ել դերիդ,  
Ինչո՞ւ ի զուր հանդցնում ես  
Զահել կրակն աչքերիդ:  
Նրա անբախտ շիրմի վրա  
Պաղ ջուր ածա աղբյուրի,  
Դու ել դնա նոր սեր արա,  
Եսպես ե կարդն աշխարհի:  
«Դե»ի անձանոթ ձայնի խրատների հետ՝ այստեղ ձուլիել են հետեյալ  
առողերը՝ մեր ժողովրդական յերդերից.—  
Այ իմ խեղճարեր խաթուն,  
Ի՞նչ կուլաս խեղճուկ և վոզորմած,  
Թէ կուլաս ու վարդ կ'ուզես՝  
Նոր տի գա վարունն ու րերե.  
Թէ կուլաս յարդ կուզես,  
Գայեր ու ալ չի տի գա\*)

Սիրուն աղջկան ուզգված հարցողական ձեի դիմումը, վարդի ու յարի հի-  
շատակությունը, պարդ ե, առնված ե ժողովրդական յերդից. այլատիս՝ անց-  
վոր ախպերը հեղճեղում ե «Դե»ի անձանոթ ձայնի խրատները—յերկու աղ-  
ջիկներին ել խորհուրդ ե տրվում զուր տեղը լաց չլինել, նրանց սիրեկանների  
դարձը անհույս ե, արցունքը կը վնասե նրանց կուսական դեղեցկության.  
«Մեգով կը պատեն աչքերդ պայծառ», և կամ կը հանդցնեն. «Զահել կրակն  
աչքերիդ», պետք ե բնության որենքին կամ աշխարհի կարդին հետեիլ, մաս-  
հակից լինելով կյանքի վայելքներին:

«Ամիսոս յեկվոր»ի այցելությունից հետո՝ թամարը դիմում ե հորը.—  
Հայրիկ, իմ հայրիկ!...  
Լաց տեսնո՞ւմ ես!...  
Յել դեռ չեն սոքա շիթերս տուածին!...  
Չը պիտի լինեմ վոչ վոքի կինը.—  
Փեսցուներիս ասա ինձանից,  
Յառ հողը մըտավ իմ ամուսինը—  
Յես ուրիշ մարդու սիրտ չեմ տա հորից!...  
Չըկա ինձ բերկլանք այլիս աշխարհում  
Պատապարելով սրբությամբ իսաղաղ՝  
Թող ինձ, նախորոք, յուր մուայլ ծոցում

\*) Հ. Ամանիկյան «Հնությունք Ակնա», յերես 476. Թիֆ. 1895. այս տո-  
ղերը չնորհակալությամբ ստացել եմ Պրոֆ. Մ. Աբեղյանից:

Հնդունի խուցը, վորպես մի դադազ:  
Անցվոր ախաղոր խրատներին Անուշը պատասխանում ե.—  
Շնորհակալ եմ, անցվոր ախաղեր,  
Աստված պահի քո յարին,  
Ճամբրիդ վերջում կանոնած ե գեռ  
Անուշ ծիծաղն աչքերին....  
Ուրախ սրտով դուք ձեր սերը  
Վայելեցեք անթառամ,  
Ինձ արցունք ե տվել տերը,  
Յես պիտի լամ, պիտի լամ:

Անուշն արտաքին պայմաններով դանվում ե թամարայի վիճակում, հա-  
մակված ե նրա վշտալի տրամագրությամբ և կրկնում ե նրա մտքերը.—յեր-  
կուսն ել մերժում են նոր սեր սկսելու հրամերը, յերկուսն ել կյանքի համար  
բերկրանք չունեն այլնս. նրանք վորոշում են սուզով անցկացնել իրենց որերը:  
«Դե»ի ազգեցության յենթարկվել ե և՛ նախնական «Անուշ»ը: Անցվոր  
ախաղոր խրատները գոհավորյալ արտահայտությունն են հերոսի անցյալ հո-  
դերանության վերջին վայրկյանի պատկերացման: Յեթե Անուշի պատասխանը  
կազմեր նրա ներկա հոգեբանության վերջին վայրկյանը՝ միանդամայն հա-  
մապատասխան կիներ նախնական հատարակության վոգում: Բայց Անուշն  
այժմ պետք ե խելագարվի, վորովհետև Մարգարիտն ել ե խելագարվել:

Մարգարիտի մտապատկերները ծնվում են անցյալ ապրումներից, վորոնք  
շատ այլապան են. Անուշի մտապատկերները ծնվում են նույնպես անցյալ ապ-  
րումներից, վորոնք չունեն նախորդի այլազանությունը: Հետեւապես՝ բնական  
ե՝ վոր նա հետեւողության ընթացքին խուսափի այն մտապատկերներից՝ վո-  
րոնք արդյունք են իրեն հետ վորեւ առնչություն չունեցող ապրումների.  
Ինչպես են՝ մոր սպանություն, նորածին զավակի սպանություն, յեղոր սպա-  
նություն, գլխատման պատճին յեթարկվելու գիտակցություն, և մերձենա  
այն մտապատկերներին, վորոնք համապատասխան են Սարոյի հետ և նրա նը-  
կատմամբ ունեցած իր ապրումներին: Խոկ իրը այդպիսին՝ հանդիսանում են  
Մարգարիտի և Ֆառուսի հուսագրոց և հուսախարոց սիրո հիշատակները: Աչա-  
այս մտապատկերներն ե ընտրել Անուշը և նրանց վրա ձևակերպել իր մտա-  
պատկերները: Այս մտապատկերներից վոմանք, սակայն, արտահայտության  
ձեի և գույների չափազանց ինքնուրույնության պատճառով, այնպիսի ինք-  
նատիպ արտաքին յերեսույթ են ստացել, վոր նրանց բովանդակության ծագ-  
ման հետեւ համոզիչ պայծառությամբ ցուցադրելու գժվարության պիտի յեն-  
թարկվելինք, յեթե Մարգարիտի մտապատկերների հետ նրանց պահած զու-  
ղահետական ընթացքի ողնության, իրը ուղեցույցի՝ չգիմելինք:

Մարգարիտի խելագարության տեսարանն սկսվում ե հետեւալ պարագա-  
ներով:—Յերբ Ֆառուսը դիշերով մոտենում ե բանտի դուան, լսում ե՝ վոր  
Մարգարիտը ներսում յերդում ե մի անիմաստ յերգ:—

Անառակ մայրս  
Նա ինձ սպանեց,  
Անողիստան հայրս  
Ինձ կերակ լափեց ևն..:

Ֆառուսը ներս ե մտնում, և Մարգարիտը նրան իրը դահիճ և ընդունում,



մոտ և Մարդարիտի մտապատկերին:—Յերկու աղջիկներն ել հայտնում են, վոր տեսնում են իրենց յարերը և ժամանցի վայրերը, այն տարբերությամբ՝ վոր Մարդարիտն իրական աչքերով յարն և տեսնում, յերեվակայությամբ՝ վայրը. իսկ Անուշը իրական աչքերով՝ վայրը, յերեվակայությամբ՝ յարը:— Յեղ այս շատ բնական եւ զորովհետեւ Մարդարիտի յարը ներկա յէ, վայրը չկա, մինչ Անուշի վայրը ներկա յէ, յարը չկա:

Մարդարիտն անմիջապես մտարելում և ֆառուսի նախկին հրապույրը՝  
ները:—

Առաջ քում եկ հայացքն ու մեկ բառ  
Շուրջ դրախտ եր ստեղծում ինձ համար.  
Եւ դու ինձ այնպես եյիր համբուրում,  
Այնպես պինդ գրկում, այնպես զուրկուրում,  
Կարծես խեղդել ուզում եյիր ինձ:

Անուշն այսաեղ խախուում և հաջորդականությունը, այլ կապակցությամբ  
հիշում եր յարի նախկին հրապույրները:—

Նա սիրուն եր, անուշահոտ, Նա գալիս եր ցողոտ, շաղոտ,  
Աչքերը լի ծիծաղով, Հանարներով ու խաղով:

Մարդարիտի յարն այժմ զուրկ և նախկին հրապուրիչ տեսքից:—  
Ո՞հ, ցուրտ և փշում քո շրթունքներից,  
Դու համբ ես, ավաղ դ, եւ չես սիրում ինձ,  
Ասա, ո՞վ խեց ինձնից քո սերը:

Անուշի յարը նույնպես անհրապույր յերեւութով և ներկայանում այժմ:—  
Ա՛ի, չե, աման, ասում են դու Արյունը չոր՝ դեմքի վրա,  
Մի դեակ ե, լուռ, հոտած, Աչքերն անթարթ, սիպտակած:

Ինչպես Մարդարիտի՝ նույնպես և Անուշի մտապատկերները սիրեկանի  
մտուն՝ կապակցված են արտահայտված, այն տարբերությամբ միայն, վոր  
Մարդարիտը նախ հրապուրիչ ապա անհրապույր տեսքն և հիշում, իսկ Անու-  
շը՝ նախ անհրապույր, ապա հրապուրիչ տեսքը:

Մարդարիտին դարձյալ սկսում են տանջել մոր, յերեխայի և յեղբոր  
ապանության մտապատկերը, ապա իր հարսանյաց մտապատկերը:—

Բացվում ե, այո, վերջին որս ե դա,  
Հարուանիքիս որը պիտի լուսանար,  
Վոչ վոքին չասես, թե դու ինձ տեսար:  
Իմ պսակը, վայ ինձ,  
Փչացավ, չկա,  
Կը տեսնվենք նորից,  
Բայց ել չենք պար դա:

Անուշն հակադրում ե իր հարսանյաց մտապատկերը:—

Տեսե՛ք, տեսե՛ք, դափ ու զուռնով Աղջի՛, աղջի՛, մտիկ արե՛ք,  
Ի՞նչ հարսնիք ե զուրս զալի,  
Մարդիկ ուրախ թոն ու ձյունով Ո՞վ ե տեսել եսովես հարսնիք—  
Զի յեն խաղում, չափ տալի...:

Մարդարիտի հարսանյաց մտապատկերին կցված և նրա դլխատման մը-  
տապատկերը:—

Խուռն բազմությամբ լիքն և հրապարակ,  
Ամբոխը լուռ ե, հնչում և զանդակ:  
Ահա բոնեցին ինձ ու կապեցին  
Երբունու կոճղին արդեն մոտեցրին.  
Յեղ գլխիս վրա շողաց տապարը..  
Գերեզմանի պես լոեց աշխարհը:

Անուշի հարսանյաց մտապատկերին կցված և Սարոյի սպանության մտա-  
պատկերը:—

Յերում են հրեն,  
Ամա՞ն, մեր տան զեմ...  
Վեր գրեք, վըրեն  
Հյուսերս քանդեմ...  
Յես ել եմ գալի՛ս,  
Եղ ո՞ւր եք տանում...  
Ինձ ել թաղեցեք  
Իր գերեզմանում...

Թե՛ Մարդարիտը և թե՛ Անուշը խոռվի արտահայտությամբ դիմում են իրենց  
սիրելաններին և վերջացնում խելագարության պատկերացումը:—

Մարդարիտ.—Ո՞հ, Հայնրիխ, քեզնից սոսկում եմ սաստիկ:

Անուշ.—Տե՛ս կը խոռվեմ,  
Լաց կլինեմ յես ե՛լ...  
Չեմ խոսիլ քեզ Հե՛տ...  
Չեմ սիրիլ քեզ ել...  
Յառաջանականում և վերջանում ե յերկի Լ մասի գործողու-  
թյունը. իսկ Ո մասի վերջին գործողությունը կատարվում ե յերկնքում, ուր  
յերկու սիրահարները, աշխարհից հեռու, միանում են հավիտենական կյան-  
քով:—

«Ֆառուստ»ի այս եպիլուզին հակադրված ե «Անուշ»ի եպիլուզը, վորէ  
գործողությունը կատարվում ե նույնպես յերկնքում, ուր յերկու սիրահար-  
ները նույնպես միանում են, սակայն տարին մեկ անդամ, Համբարձման գի-  
շերը—նրանց հոգիներն, իրը յերկու աստղեր, յերկնքի տարբեր ծայրերից գա-  
լիս՝ համբուրվում և բաժանվում են:

«Անուշ»ն հալիլոգով վերջացնելու և սիրահարներին յերկնքում միացնելու  
գործարար ներշնչվելով ֆառուստից՝ նրա պատկերացումը փոխադրված և ժո-  
ղովրդական հավատալիքների մինոլորտը: «Ոսս և Վորդիթեր»ի վիճակահա-  
զովրդական հավատալիքների մեջ հիշատակված են լեյլի և Մեջլումի անուննե-  
նության նկարագրության մեջ հիշատակված են լեյլի և Մեջլումի անուննե-  
նության նկարագրությունը, հավանորեն և այլ պատճառներ՝ առիթ պիտի  
ըր: Այս հիշատակությունը, հավանորեն և այլ պատճառներ՝ առիթ պիտի  
ըրային անդրադառնալու հայ ժողովրդի ընդարձակ Մշաններում տարածված  
այն հավատալիքն՝ թե լեյլի և Մեջլումի, այդ յերկու անմուրազ մեռած  
այն հավատալիքն՝ թե լեյլի և Մեջլումի, այդ յերկու անմուրազ մեռած  
սիրահարների աստղերը համբարձման գիշերը յերկնքի հեռավոր ծայրերից  
սիրահարների պատղամում և կրկին բաժանվում են:\*) Ահա այս ձեռվ «Ֆառուստ»ից  
գալիս, համբարձման կրկին բաժանվում և ժողովրդական բովանդակու-  
առնված ընդհանուր գաղափարի մեջ տրվում ե ժողովրդական բովանդակու-  
առնված ընդհանուր գաղափարի մեջ տրվում ե նրա բո-  
թյունը, բայց մի այնպիսին՝ վորն ըստ ամենայնի ներդաշնակվում ե նրա բո-  
թյունը, բայց մի այնպիսին՝ վորն ըստ ամենայնի ներդաշնակվում ե նրա բո-

\*) Բուլանը կամ Հարք դավառ. Թիֆլիս 1901.



Արեիելի խումբը թելապրում և փերիներին հայտնվելու գիշերը, հատկապես՝ բարնան—Համբարձման զիշերը և յերդելու. իսկ նրանց ողբ բարձրացնելու և վողբերդության տբամարդելու համար՝ աջակցում յերկնածին մանկանց և վողբերդակ վողիներին։ Բայց նա ունի իր աղջեցության ամելի բի վորոշ սահմանը—իերիները յերդում են։

Յեկե՞ք, քույրե՞ք, սեդ սարերի  
Զբնազագեղ վողիներ,  
Յեկե՞ք, ջահել սիրահարի  
Սերը վողբանք վաղամեռ:

Այստեղ Արեւելն հրավեր և կարդում իր խմբին. «Ըստք, վար այսուղի թշուաք... կատարեցեք Ելֆիրի ազնիվ պարագանությունը»։ Այստեղ փերիներից մեկն ստանձնում է Արիլիլի դերը և նույնպես հրավեր և կարդում իր խմբին. «Յեկեք, քայլեր... սերը վողբանք».... Այնտեղ վոգիները վնրակվում են «Հրաշալի խումբ» կամ՝ «Վոգիների հրաշագեղ խումբ», այստեղ փերիները՝ «Զքնաղագեղ վոգիներ»։ այնտեղ նրանք դժբախտին խոճում են, այդ պատճառով համապնդում են. այստեղ համարքում են՝ վտակեմենի մերը «վողբանու»։

Վոռպիներն ամբողջ դիւները յերկուամ են, հենց վոր արեն տհափոր աղջուակով սկսուած ե ծագիկ՝ Արևիելն զգուշացնուամ ե նրանց —

Վո՞րքան ազմուկ ե բերում լույսը,  
Փողի հնչուն պահում չորս կողմ՝  
Աչքեր են կուրանում, լսելիք գարմանում.  
Ամեն բան հնչում ե, ամեն բան յերգում,  
Շուտով, փնտոեցեք ծաղկիկներ,  
Խորունկ, խորունկ այնտեղ մտեք,  
Թփերի մեջ, տերենութիւն տակ  
Ոռո հանսիստ անդկազնենք :\*)

իսկ պերինե՞ցը .— նրանք հետեւում են Արթելի հրավերին .—

Ու վիերիներն եսակես տիպուր

Յերգում ելին վողջ դիշեր.

Աւ հենց շողաց ցոլքն ալ

Несчастливца альфам жалъ

Вы кто сюда слетелись в рой свободный,

Исполните долг эльфов благородный!

Смотрите страсть душевную в тиши.

Упреки мрачной совести смягчите.

Утишите вечный страх его души.

\*) Холодков.—Сколько шума свет несет!

Трубный звук повсюду мчится,

Слепнут очи, слух дивится:

Все звучит и все поет.

Поскорей цветов ищите,

Глубже, глубже в них уйдите:

Меж кустами, под листком,

День мы тихо проведем.

Առաջ առաջ կեցին ակն աղբյուրի ,  
Մտան կաղնին Հաստաբուն ,  
Ու լեռնային վտակների  
Ամբիները պաղպաջուն :

Այժմ ավելի պարզում է՝ վոր փերիներն Եթիելի խմբին հասկելով հայության վերջում են, ուղեմն, գարնանը, յերդում են ամբողջ գիշերը, խուսափում են արքունիք և նրանց հետ կատարելապես չուղյանափալու նախանձախնդրությամբ՝ վերջին վայրելանին վոմանք ուրանում են իրենց եյությունը և ողայինից փոխարկվում են ջրային վոգիների:

vi

Իբր յելակես ընդունած մէկը միտքը կրկնում ենք այժմ իբր յեղբակացություն : Այսպէս ուրեմն, նախնական «Անուշ»-ի գործողությունը մնացել է արան զուգընթաց՝ մարդարիտյան վողբերդության հետևազումնիւթիւն և սրան զուգընթաց՝ մարդարիտյան վողբերդության թյամբ՝ նույն մոտիվների նույն հաջորդականությամբ ու զարգացման թյամբ՝ նույն ստեղծվել է մի նոր գործողություն, անուշյան վարփեր զույգուն :

Անուշը, մի գյուղացի մատուցած աղջկե, սիրում և հովով օքարոյն։ Օյք  
սերը պետք և խոր արմատներ արձակած լինի նբա կուռական սրտի մեջ։  
Համառակ հասարակաց կարծիքին և մոր արդեւ լիներին՝ Սարոյի հետ հաճախ  
տեսնվելը նրա հոգեկան անհրաժեշտ պահանջն է։ Յերբ այժմ զանազան  
պարզակերպ ազատվում և մոր ընդդիմությունից և դնում և Սարոյի մոտ՝  
պատրվակներով ազատվում է մոր ընդդիմությունից և դնում և Սարոյի մոտ։

ակում ե յերգել, Անուշը յերգը լսում է և Սարոյին տեսնելու յե դնում, ու-  
րեմն ինչո՞ւ և վո՞րտեղ պիտի սպասեր: Յենթալուհիք՝ վոր, արդարեւ սպա-  
սեց, մի՞թե մեղադրանքները համենայն գեպս մտացածին չեն:—

Համաձայն մարդարիտյան վողբերդության հաջորդական գարգացման՝ ինչպես տեսանք, «Պարտեզ» տեսարանի՝ Մարդարիտի և Ֆառուսի առաջին տեսակցության հակադրվեց Անուշի և Սարոյի առաջին տեսակցությունը՝ ճորում։ «Պարտեզ»-ի տեսակցության հոգեբանական բովանդակությունն էր Մարդարիտի տարակուսանքը, և Ֆառուսի հավատիքայումը։ Հետեւապես՝ ճորի տեսակցության մեջ ևս ստեղծվեց նման հոգեբանական բովանդակություն։ Մարդարիտի տարակուսանքը, սակայն, հիմնավորված եր դասակարգային տարրերությամբ։ Նա համոզված չեր, վոր Ֆառուսի նման մի «աղջնական», «բաղմափորձ» և «շատ բան» տեսած մարդ իրեն հավասարժությամբ սիրեւ։ «Անուշ»-ի նախնական հրատարակությամբ Անուշն ու Սարոն արդեն դյուլացիներ են, նույն դասակարգի դավակներ։ Վերամշակությունը կատարված ե, ինչպես հիշել ենք, առանց հիմնական կառուցվածքի փոփոխության։ Արդ, յերբ յուրացվում է Մարդարիտի և Ֆառուսի հոգեբանական բովանդակությունը, բնականարար անտեսվում է այդ բովանդակության հիմունքը—դասակարգային տարրերությունը։ Իսկ յերբ հաջորդ «Անտառ և քարայր» տեսարանից բոլորովին այլ հանդամանքների տակ դարպացած էրումի մոտիվն ե մուտք գործում իրը հիմք Անուշի մեղադրանքներին ու վախարինում դասակարգային տարրերության՝ առաջ ե դալիս հիշյալ արհեստականությունը։ Այն Անուշն ու Սարոն, վորոնց մենք գիտենք նախքան հանդիպումը, այս հանդիպմամբ շատ բան կարող ելին իրարու հաղորդել, բայց մեկի կողմից մեղադրանք, յուսի կողմից հավասարիացում—վո՞չ կել, բայց մեկի կողմից մեղադրանք, յուսի կողմից հավասարիացում—վո՞չ յերեք։ Այս արհեստական վիճակն արդյունք է հերոսների անցյալ ապրում։ Այսին անտեղյակ մի յերկրորդ անձի թելադրության։

Մարգարիտի տեսչն արտահայտություն և բացարձակ, անխառն զգաց-  
մունքի: Անուշի տեսչը, հետեւղականության մեջ վորոշ ինքնուրույնություն  
հայտնաբերելու ցանկության անհաջող հետեանքով՝ վերածվել է կրքի,  
վորը, սիրահարների սովորական տեսակցություններից մեկում հայտնվելով  
իր բողեական գոհացում պահանջող ընախառական հույզերի անսպասելի  
բանեւմ՝ հոգեբանական վրիպում և, վոր վորձում և գոհհեկության առաջ-  
նառել մեր համակրությունն ակնկալող աղջկան:

Դիպուեմոնան, մտավորապես Անուշից շատ ավելի հասուն, և ներկա վայրը՝ Դիպուեմոնան, կը ավագությամբ, ի տորհութածող արամադքությամբ, առկանին նրանից ավելի կը ավորական, ի տորհութածող արամադքությամբ, առ

նում և ուռենու պատմությունն իբր յերգ, իբր իր հոգեկան վիճակի անմիջաւ կան արտահայտություն: Իսկ Անուշն առնում և այլ պատմությունն իբր լուհանուր բովանդակություն և համեմատական ձեռվ՝ իր անձը փոխադրում այնտեղ: Յեթե նա առներ իբր պարզ յերգի կրկնություն իսկ՝ համենայն գեղս այս պատմությունը նրա բերանում դարձյալ կլիներ թյուրիմացություն:—Զենք կարող յերեակակայել, վոր խանձող գլացումների և զգայությունների գերագույն վայրիկանը հեվիչեավ ապրող այս աղջիկը հանկարծական այլավոխության յենթարկի և ուռենու յերգով, կամ պատմությամբ վրուչ ժամանակ ել խորհրդածող հոգերանության անձնատուր լինի:

Զորի տեսակցությունից հետո՝ Անուշն հայտնվում է վիճակ հանող աղ-  
ջիկների շրջանում, ուր չարագուշակ վիճակի ազդեցության տակ, իբր հա-  
կաչը ըստթյուն Մարգարիտի վողքի՝ արտասահնում և իր վաղը գործած  
դարձյալ քսան տարի հետո:

Գերմանացի քաղքենի աղջկա վողբն արտահայտվում է իր անխառն զգացումների հորդահոս զեղում, համապատասխան վոչ միայն իր հոգեկան կառուցվածքին, այլ մանավանդ՝ ներկա, գատողություններին անմատչելի, բացարձակապես ընազդների մեջնորդությունը ապրող վայրկանին:

Հայ գյուղացի աղջկա վողբի մեջ բացակայում ե դպացումը, հակառակ կը կնքուի «Ա՛խ»-երին: Ենուշն առնում ե Մարզարիսի ձեռից տիրամոր ընկը կնքուի մասին: Ենուշն առնում ե նրանից վողբերգուի հուսահատական ծայրաբաժան ծաղիկները, առնում ե նրանից վողբերգուի հուսահատական յերեխութը և փորձում է ինքնուրույն արտահայտության, բայց անձնատուր ելինում փելիսուիսյական այնպիսի դատապղությունների և յեղարկացությունների՝ վորոնք միանդամայն անձարսելի յեն իրեն համար:

կանուգությունը կատարելու մասն է առաջին համարը: Նա «իմ-

Նախ պետք է վսրուչել Անուշի խելագարության և յուրիւմը. Օ՛մ «Հա-  
նախ պետք է վսրուչել Անուշի խելագարության և յուրիւմը. Օ՛մ «Հա-  
բար լագար» չե, այս բառի խելական տոռումով, ինչոքս և «Քինչագար» չե Մար-  
դարիսը: Գյոթեն խելագարության տեսարանում լուծում սատանալիք բարու-  
ղարիսը: Գյոթեն խելագարության տեսարանում լուծում սատանալիք բարու-  
ղարիսը: Ոֆելիայի իրական խելագարությանը վերածեց պատ-  
կիճիների համար, Ոֆելիայի իրական խելագարությանը վերածեց պատ-  
կիճիների համար, Հափշտամիության (extasis), բնուկանը և իրականը Մարգա-  
րարանիած հափշտամիության (extasis), բնուկանը և իրականը Մարգա-  
րարանիած յիրեակայության մեջ փոխվում են տեսության մտապատկե-  
ների:

Սարգարիսին հետեւ և յանկանում Անուշը:

Սակայն Մարդարկոտ ապահով իր մոռը, պատճառ գարձավ յեղբոր սպա-  
նության, խեղզեց նորածին ապօրինի զավակին: Այսքան արյունից հետո՝  
չույսը կորցրեց դանել սիրականին. այժմ դանդում և շիմաների տակ և ա-  
ռավուցյան պիտի առաջնորդվի կառավինասեղի: Այս ահապիոր գժբախտու-  
ուակուոյան պիտի առաջնորդվի կառավինասեղի: Եթե կյանքի վերջին  
թյունները հանեցին մատազ աղջկա հոգին հունից, և յերբ կյանքի վերջին  
բաղեներին հանկարծ հանդիպում և սիրականին, լուծդում են հին և նոր  
մտապատկերների հանգուցները և նրան նետում ինքնամուռացման գիրիլը:  
Մարդարիտի հափչակությունը հոգեբանական անհրաժեշտություն է, ինչ-  
պես և անհրաժեշտություն է այս կամ այն ձեռվ աշխարհից նրա հեռանալը:  
Իսկ ի՞նչ է տեղի ունենում այսուղ:—Սպանում են Մարոյին, արդ պատ-

կանչից հետո՝ յնցում և մեզ Der Menschheit ganzer Jammer-  
իսկ այստեղ պախուստի վայրկանից՝ յերկի կենտրոնական անձը Սարոն և այլ-  
ևս, և նրա մահվամբ՝ կատարվում է գործողության հաշվեհարդարը։ Մին-  
չեվ գարուն սահող ամիսների միջոցը թափուր է, ուր վոչինչ չե կատարված  
Անուշի կենտրոնական անձ լինելու մասին մեր թուլցած տպավորությունը  
դորացնելու, այլ տեղից գործողության թվեր առնելով՝ ինչպարության  
հասովածը տրամատիղմով և զգացումների վերջին լարումով կենքանացնե-  
լու։ Ահա այս պատճառով այս համալծը գործողությունից դուրս և մնա-  
ցել և դարձել պոհմի եպիլուսը, մի հպիլոգ, ուր հանդես է գալիս հերոսնե-  
րից մեկը և մենախոսությամբ պարզում է բուն դործողության մեջ մոռացու-  
թյան մասնված իր ձականագիրը։

Անուշի սիրահարը հովիլ Սալտն է, առ իր սիրո մտախն զանազան ապա-  
ցույցներ հիշատակելուց հետո՝ ապահովմ է —

Եթեն ու մերը թե վոր ինձ չտան՝

Երին կը թափեմ յես ունեմի նման :

Սարոյի սիրային արտահայտությունները, այս սպասալիքից առաջ և Սարոյի սիրային արտահայտությունները, այս սպասալիքից առաջ և հետո՝ հասարակ տեղիք են, չատ չատերի բերանին հասուեկ: Ամեն մարդ կարող է սիրահարվել, բայց և ամեն մարդու խառնվածքով կը հասկանչի նրա սերը, ինչպես, ի հարկե, սիրով՝ խառնվածքը: Այս տեսակետով՝ վերոհիշտ յալ ինքնահատուկ արտահայտությունն անմիջապես գուշակել ե տալիս, վոր գործ ունենք վոչ թե մի առհասարակ սիրողի հետ, այլ՝ ինչպես հաճախ վոր գործ ունենք վոչ թե մի սիրող կիքիքի հետ, և սպասում ենք իգիրությամբ լուծիչառակվում ե՝ մի սիրող կիքիքի հետ, ապասում ենք իգիրությամբ:

Եախնական հրատարակության մեջ Անուշը վերադարձ ու օգտագործել է նույն առաջին ուսումնական դեպք նույն որը, յիշե վոչ նույն առաջին ուսումնական դեպքը առաջակա է —

Անդավ մի ամիսն, և ահա մի որ

Տաղավարների հետ, իրենցապահին

Անգլական առ Անգլիական տիտուր, պլիսակոր.

Համարնությունը հավաքվեց գլխին,

Царствование Евгения III

կենաց համելից չեմ գույն

Առկ լոսժուազու ալեւ յ յ յ յ

У *Любя* філії відкриті, та інші.

Եաբունակության մեջ՝ միջնամասն և քառամասն առաջ է լույսի սպանության լուրը:

48

Հերամշակված հրասարակության Խթ հատվածը վերջանում է —

ՅԵՎ—ԱՀԱ ՄԻ ՈՐ

Քաղվար կանանց մեջ, մթան հետ թաքուն,  
Շորերը պատռած, տխուր, գլխակոր,  
Անուշը ձորից յեկալ հորսնց տուն:

Եպկ Հատվածն սկսվում է . . .

Ղալիս և Անուշն յերեսին ընկած,  
Կանգնած են շուրջը կանայք հարեան...  
Աստված խնայեց՝ կոպիտ ախտերը  
Հեռու հանդերից դեռ առւն չեր դարձել  
Իսկ խոժոռագեմ ալեոր հերը  
Սկսավ փրփրած թքել, անիծել:

Շարունակության մեջ նույն ձեռվլ միջամտում եւ քահանան և տարած-  
պում եւ Սարոյի սպանության լուրը: Աւրեմն, յերկու հրատարակություն-  
ներում ևս, վրանական սբբագրությունից զատ՝ վլու մի եական փոփոխու-  
թյուն չկա.—Անուշի վերադարձն ու Սարոյի սպանությունը տեղի յեն ու-  
նենում նույն յերեկոյան:

Վերամշակված հրատարակության մեջ, սակայն, ինչպես նկատվում է, վերադարձին հաջորդող դեպքերն ընդհատված են: Ֆառարին համապատասխան վիճակ Սարոյին ևս ստեղծելու համար՝ XXI հատվածում տեղակոր- փած է բայցին, վորի ներածության մեջ հեշտակեված է: —

Յեկը յերբ յերեկոն հանգարտիկ ու լուս  
Սարերից իջնում, խավարն և պատում  
Նրա բայաթին վողբում և տիսուր,  
Բնեկու սարերին խռոսում, դանդաստվու

Բայց այժմ արդեն վերագարձի և սպանության միջն նույնիսկ մեկից ավելի յերեկոներ անցան .—Անուշն, ուրիմն, վերադառնում ե տուն . նույն յերեկոյան տարածվում է Սարոյի սպանության լուրը, իսկ նույն միջոցին սա յերեկոները յերգում ե քայաքին : Ի՞նչպես դուրս դանք այս չփոխությունը : Պարզ է, քայաքին, իբր յեկամուռ տարր՝ բռնությամբ ե տեղավոր-նից : Պարզ է, քայաքին, իբր յեկամուռ տարր՝ բռնությամբ միահամայն անտեսված :

Բայց մի բոպէ մոռանանք այս ձևական թյուրիմացությունները և զբաղ-  
վենք ավելի եական հարցերով.—Սարոն ինչո՞ւ մնաց սարերում. Անուշն  
ինչո՞ւ կերպարագծավ տուն :

Նախնական հրատարակության մեջ ասված է . . .

Այստեղ՝ Սարոյի սպանությունից հետո՝ Թամարայի ճակատագրից վորոշ գծեր ելին վերապահված Անուշին, ուրեմն նա դեռ պիտք ուներ ապրելու: Իսկ սպանության պահուն՝ նրա ներկայությունից ծաղկվիք բարզությունը: Խուսափելու համար՝ առանց հիմնափորման, բայց, անջատման թյուներից խուսափելու համար՝ առանց նկատվելու, արդարե «թակարճատեսության պատճառով», կարծես առանց նկատվելու, արդարե «թագուն» ներս առնվեցավ հոր հարկի տակ:

Վերամշակված հրատարակության մեջ Մոսիկ դիտավորությունը մնաց անփոփոխ։

Անաց հանդերում . յերդում կերպով նա  
Աւը վոր ել լինին , նրանց միասին  
Գտնի կռտորի , սիրաը հովանա :

Բայց վերովհետեւ Անուշի համար այժմ վերապահված եւ վոչ միայն  
թամարայի, այլև Մարգարիտի ճակատապղից գծեր, նա նույն ձեռով, Հե-  
տևապէս նույնական առանց նկատմելու՝ ուզում եւ ներս մտենաւ, իսկ յերբ  
այս իրադարձությունների միջև բոնությամբ աեղավորվում եւ բայաքին,  
անջատման միջև ակներել եւ դառնում որերի անջրդիկեալ և յերկի ձեվական  
աններդաշնակության վրա բարդվում եւ ամենագլխավորը հոգեբանական  
աններդաշնակությունը:—Հրապարակի վրա մնում եւ մերկ իրականությու-  
նը.—Մեր իգիր Սարոն, սիրականի համար արյուն թափելու սպառնակիք-  
նը.—Մեր իգիր Սարոն՝ փախցրեց Անուշին, տարավ սարերը, այնտեղ մի ա-  
ներ աեղացող Սարոն՝ փախցրեց Անուշին, տարավ սարերը, այնտեղ մի ա-  
միս սպահեց և հետո՝ յերկշուռությունից նրան վատաքար տուն ուզարկեց:  
Երկի կառուցգաճքը վճռական կերպով արգելում եւ այս արարքին մեղմա-  
ջուցիչ վորոն բացատրություն տալու. ընդհակառակը՝ հաստատում եւ այդ  
տեսակեալը, վորովհետեւ նա մնաց սարերում—  
Փախցրած յեղերպին նման,

Դաստիարակության պահանջման առաջնային գործություն :

Կուղեմ լըրչեմ անդյուման,

Ես աշխարքից բեղարած...

Մեռնեմ աղօծնեմ ես որից ,

Բալքի առնեմ դադար, քուն՝  
Յեկ ի՞նչպես կուպեք՝ վոր տհաճություն, այո՛, արհամարհանք չպատք  
գեպի յերկչու մարդու կեղծ հողածու զպացումները հանդես իր սիրակա-  
նեն . . .

*U.S. Bureau of Land Management, 1998*

Վայ թե հանկարծ իմանա,

Յես ազատվեմ ես յավեց,

Աչքը լալով նա մնա :  
Այժմ պարզ է իր սիրած աղջկա համար արյուն թափող «իգիթ»-ի իս-  
կական կերպարանը՝ «Das war also des Pudels Kern». Մենք խաբիւ ենք, ուրեմն, նրա նախորդ արարքների և  
բուքերի մեջ իգիթը գնուուելով : Հավանորեն Սարոն չփախցրեց Անուշին,  
այլ՝ Անու, ու Սարովին :

Այժմ անցնենք յերկի գործողության զարդացման՝ օպտուզաա չըստ տարակության մեջ իգիպ-ների սիրո աշխարհում իշխող «ադաթ»ը ներկա-

յոցված ե իր գործողության հանդույց : Ներածության մեջ հեղինակը հաւասարացնում է . . .

Այսպես ե , այս , իդիթների մեջ ,  
Վոր ինամախոսի քար չունին շեմքում . . .  
Թե քաջ տղա յե՝ չնորհը ցույց տա—  
Սրտի սիրածին թող փախցնի տանի ,  
Վոր և լոռզ ասի , թե՝ ահա  
Մի մարդ պսակի , սիրո արժանի :

Այստեղ բուն գործողությունը ծագում է կոխի նկարագրությամբ , զարդացնում է Անուշի փախուստով և լուծվում Սարոյի սպանությամբ :

Վերաբշակված հրատարակության մեջ ներածությունը , հետեապես և հանդույցը , մեջտեղից վերացված ե , վորով կոխը հանդիսացել է իր հանդույց , փախուստը իր զարգացում , իսկ սպանությունը՝ լուծում :

Նախնական հրատարակության ահա այս գործողության վրա ավելացել ե անուշյան վողբերդությունը , վորի գործողությունն սկսվում է Սարոյի յերդով , զարդանում է ձորի տեսակցությամբ , միակահանության առթիվ Անուշի հոգեկան տանջանքներով և լուծվում նրա խելագարությամբ :

Յերկու գործողությունների զոդման հարմարագույն կետեր , իրենց նրան արտաքին յերեսութիւնի պատճառով , հանգիստացել են «ֆատուս»-ի մենամարտը և նախնական «Անուշ»-ի գոտիմարտը : Մարգարիտյան վողբերդության այն մասերը , վորոնք ներկայացվել են մենամարտից առաջ՝ ներկայացվել են , իր անուշյան վողբերդության մասեր՝ և՝ գոտիմարտից առաջ իսկ մենամարտին հաջորդող մասերը՝ փոխանցվել են գոտիմարտին հաջորդող գործողության :

Բնութագրերի վերլուծման ընթացքը հարկագրեց մեզ կանխել՝ թե այս վերջին մասերը—բայցին և խելագարությունը—ի՞նչ արժեք են ներկայացնում գործողության համար : Այժմ տեսնենք՝ թե անուշյան վողբերդության նախկին մասերը և նախնական հրատարակության գործողությունը ի՞նչ արժեք են ներկայացնում միմյանց վերաբերմամբ :

Նախնական հրատարակության գործողությունը մի ինքնուրույն ամբողջություն ե , վորի և վոչ մի մասը՝—վո՛չ կոխը , վո՛չ փախուստը և վո՛չ սպանությունը սաղմնավորված չեն անուշյան վողբերդության մեջ :

Յեթե այստեղ սիրահար զույգի միացման զեմ գոյություն ունենար վորեւ արգելք՝ իր հանդույց , հակամայից անկումը կնկատեյինք իր նրա զարգացումը , «համբարձման առավոտը» այդ բարեւթյունների աղջեցության տակ Անուշի հոգին պատկերացնող և նրա փախուստը ներքուստ պատճառաբանող միջոց , իսկ կոխը՝ փախուստն ստիպողական դարձնող և սովանությունը հիմնավորող աղջակ , բայց այդպիսի արգելք գոյություն չունի , և առանց անուշյան վողբերդության վո՛րեւ մասի առենաչնչին աղջեցության՝ կոխը դարձյալ տեղի պիտի ունենար , յերկու ընկերները պիտի թշնամանային , վորի պատճառով Մոսին իր քրոջը պիտի չտար Սարոյին , իսկ Սարոյ՝ պիտի փախցներ Անուշին և պիտի սպաններ Մոսիից : Մի ամբողջական գործողություն , արդարեւ , վոր հյուսվում և Սարոյի չուրջը և նրան դարձնում իր հերոսը :

Այս՝ նախնական գործողության տեսակետով՝ անուշյան վողբերդությունն իմաստից զուրկ է : —Սարոյ առաջին իսկ առթիվ սպասնաց . . .

Քո հերն ու մերը , թե վոր ինձ չտան՝  
Արին կը թափեմ յես գետի նման :

Յեկ կամ . . .

Եւ չեմ գիմանա , կը փախցնեմ դասով :

Բայց ահա անցնում է զարունը , անցնում է ամառը , նույինիսկ աշունը , թեւակոխում էնք ձմեռը . մինչ այդ սիրահարները հալումաշ են լինում , կատարվում է անկումը , վորի բարդ հետեանքների մասին յերկուսն ել մտահոգվելու հասունությունն ունին տանչվում է Անուշը , բայց այնուամենայնիվ Սարոյ գեն գեռ շարունակում և «գիմանալ» և աղջկա վոչ «Հերը» և վոչ «մերը» նրանից վորեւ առաջարկություն չեն ստանում : —Ինչո՞ւ , արդյո՞ք պիտի մերժվեր . . . ամենեկին , զանարած Մոսին իր քրոջն անտարակույտ պիտի տար Հովիլ Սաւարյին , վորովհետեւ դիտնալով հանդերձ , վոր Անուշը գիշերները «Սարոյ ջան , Սարո , Սարո» յէ կանչում , այնուամենայնիվ՝ մինչև կոխը որը շարունակում է մնալ արդ Սարոյի «ախպեր աղան» : Այսպես ահա , սիրահար զույգի միացման զեմ վորեւ արգելք գոյություն չունենալու պատճառով՝ միանդամայն անիմաստ է դառնուու նրանց սրտմաշուկում , վորոնք հակամարտութեան կողմանություն չստանալով՝ ձգձգվում են , ձգձգվում մինչև ձմեռ , կոխը որը , վորպեսպի սրա հետեանքով , վերջապես , հանգույցը գոյանա և գործողությունն ընկնի իր հունի մեջ , բայց մինչ այդ՝ նրանք վարձան և՝ այդ գործողության համար անիմաստ :

Սակայն ի՞նչպիսի կապերով են միացած անուշյան վորերովը յանդարձակության տարբեր մասերը միմյանց հետ և ի՞նչ արժեք են ներկայացնում ամբողջ յերկի համար :

Ինչպես տեսանք՝ Պ. Պոռշյանի «Մոս և Վարդեթերի»-ի աղջեցության տակ ստեղծվել է համբարձման միջամայրը , ուր նման Վարդիթերի կենարօնական անձ է գարձել Սնուշը , ստանալով Մարգարիտի հոգերանությունը : Նույն աղջեցությամբ , անչուշու , հղացված պիտի յենթադրենք առաջին նախերգանքը , «Համբարձման գիշերը» , ուր հանդես են դալիս «Ֆատուս»-ի վոզիները :

Այս հատվածը , իր նախերգանք՝ պայմանական արժեք ե ներկայացնում , նաև , իր սարգեւր իրավացի կերպով հնչեցնում է բուն գործողության մեջ իշխող Molle accord-ները : Այս չափով նա նախերգանք է , ճիշտ և , բայց ինչո՞ւ այդ աշօր մի ները հատկապես համբարձման գիշերը , չե՞ վոր այդպիսով կապվում է «Համբարձման առավոտ»-յան հետ , վորը նշանակություն ունի իր Անուշը ընթացիկ տրամադրությունը ցուցադրու շրջանակ և այդպիսով՝ դառնում է միայն այդ յերկորորդական միջաղեալի , վո՛չ ամբողջ յերկի նախերգանքը : Արդարեւ , այս յերկու մասերը մի անբաժանելի ամբողջություն են : Գիշերը վերիներն են գուշակում ել՝ վիճակը , և գուշակում են մինույն բանը , յեթե առավոտը համբարձման սովորություններն են նկարագրում , զիշերն ել նկարագրում է համբարձման հավատալիքները . յեթե Ա. յերգի բովանդակությունը կատարվել է առավոտից առաջ՝ նա կատարվել է , ուրեմն , և՝ զիշերից առաջ :

Հետևողներ՝ միանդամայն անբացատրելի յէ այս յերկու անբաժանելի մասերը բաժանել, նրանց միջև դետեղել Ա. յերգը և գիշերվան շուայլել «նախնականք» տիտղոսը, վորը, անվիճելիորեն, պատկանում է Ա. յերգի I, II և III հատվածներին, վորոնք իշխում են ամբողջ յերկի վրա և նրանից վոգեկոչում անցյալի դեպքերն ու դեմքերը:

Յեթե «Համբարձման գիշերը» կորցնում է իր արժեքն ամբողջ յերկի համար՝ ապա կորցնում են իրենց արժեքը և վերիները: Սրանց ներկայությունը կարևոր է միայն համբարձման գիշերվան խորհրդավորությունը հանդիսավորելու համար: Յերկի ռեալական ընույթն իրավունք չի առիս ընդունելու՝ վոր ռոմանտիկ փերիները վո՛րեւ գիշեր կարող են հավաքվել սարի գլխին և վողբերդել Անուշի վաղամեռ սերը:

Ինչպես հիշեցինք՝ Ջրբեր աղջիկների յերգը Լերմոնտովի «Դե»-ի և Ռուբենշտայնի համանում ոպերայից և աղդված: Լերմոնտովը, վորպես և պիկ, խուսափում է ոպերային տարրերից և Ջրբեր վրացուհու մասին իրողության նկարագրությամբ և գոհանում: Ռուբենշտայնը, վորպես յերաժշտ, ոգտագործում է Լերմոնտովի հակիրճ իրականությունը և կառուցում և մի խմբերգ:

«Անուշ»-ի մեջ պոեման շփոթված է լիբրետոյի հետ, անտեսված է Լերմոնտովը, Ռուբենշտայնի հետեւզությամբ գրված և նույնպիսի մի խմբերգ:

Այս խմբերը, ինչպես և համբարձման առավոտայն խմբերզներն ու մեներդները պոեմական տարրեր չեն, այլ՝ իր սովորություն նկարագրելու տենչից առաջացած անհարկի շոայլություններ՝ ծանրաբեռնում են գործողության ընթացքը և սպառնում են պոեման վերածելու լիբրետոյի:

Այսպես, ուրեմն, թե՛ բնութագրերը և թե՛ գործողությունը հետեւզական գարգացում չունեն, յերկի միակուր ամբողջությունը սպահանդիւր չե:

Ինչո՞ւ:—

Վորովիհետեւ «Անուշ»-ն անհարիր տարբերից և կազմված, և բանաստեղծի ստեղծագործող բովը պահանջված ջերմությունը չե ունեցել՝ լուծելու այդ տարբերը և կերտելու միաձույլ ամբողջությունը:

Այս յեզրակացությամբ, անշուշտ, հավակնություն չունինք ժիանելու «Անուշ»-ի գեղարվեստական արժանիքները, վորոնցով միայն պայմանավորված և նրա վայելած կենդանի ժողովրդականությունը: Բայց այդ արժանիքները, արտահայտությունը լինելով բանաստեղծի ուրույն ընդունակության և հատուկ նրա բոլոր ստեղծագործություններին՝ վերապահված են ոյլ ուսումնասիրության: Այստեղ մենք մատնանշեցինք գեղարվեստական այն յերեւյթները միայն, վորոնք, անմիջական հետևանքը լինելով աղքացության, կոչված են միաժամանակ հիմնավորելու այդ աղղեցության դոյլությունը:



69.628

ԳԻՆԵ 50 ԿՐՊ.